

**ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ
2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
Աշակերտի ուսումնական նյութ**

© Լուսինե Ալեքսանյան, Հասմիկ Անտոնյան

ԹԵՄԱ 1 – ՈՎ ԵՄ ԵՍ

ԴԱՍ 1 – ՈՎ ԵՄ ԵՍ, ԻՆՉՈՎ ԵՄ ՆՄԱՆ ԵՎ ՏԱՐԲԵՐ ՄՅՈՒՍՆԵՐԻՑ

1. Անուններ դրեք երեխաներին և նկարագրե՛ք, թե ով ինչով է նման կամ տարբեր մյուսներից:



2. Դուրս եկեք բաց տարածք և խաղացեք «Առվակ» խաղը:

Զույգերով շարք կազմեք՝ ձեռքերը գլխավերևում միացրած:

Առջևում կանգնածները բաժանվում են և հերթով անցնելով զույգերի միջով՝ ընտրում են մեկին, որն իրեն ինչ-որ բանով նման է կամ տարբեր է իրենից, օրինակ՝ **Ես ընտրում եմ Արտակին, քանի որ նրա մազերն իմի պես սև են, կամ ես ընտրում եմ Հասմիկին, որովհետև նրա մազերը շեկ են, իսկ իմը՝ սև:** Եվ իր ընտրած նոր զույգի հետ կանգնում է շարքի վերջում: Կենտ մնացածները շարունակում են խաղը մինչև բոլորը կարողանան ընտրել նոր զույգին: Ցանկալի է, որ նույն հատկանիշը չկրկնվի:





Իմ անունը _____ է:




_____ ከኒ:



1.



Իմ սիրած խաղերն են



A vibrant illustration of a park scene. On the left, a large, leafy green tree stands. In the center, a group of children are playing: one is on a swing set, another is climbing a red play structure, and others are on the grass. A boy in the foreground is holding a red flower. The scene is bright and cheerful, with a clear blue sky. The text 'vectorStock' is visible in the bottom left corner.

3

ԴԱՍ 2 – ԻՄ ՀՈՒՅՋԵՐԸ

1. Դիտե՛ք նկարները և նկարագրե՛ք՝ ինչ հույզ է պատկերված նկարներից յուրաքանչյուրում:



2. Ի՞նչ կզգաս, ի՞նչ կմտածես, ի՞նչ կանես:



Մայրիկը գրկել է քեզ:



Նվեր ես ստացել:



Մոտակայքում հրդեհ է բռնկվել:



Շունը հաչում է վրադ:



Վնասել ես մատդ:



Անսպասելի մի բան տեսար:

Մենք օրվա տարբեր ժամերին կամ տարբեր իրավիճակներում տարբեր տրամադրություններ ենք ունենում: Երբ մեզ սիրում են, մեզ երջանիկ ենք զգում, երբ նեղացնում են, տխրում ենք: Երբ ուսուցիչը գովում է, հպարտանում ենք, իսկ երբ ինչ-որ բան լավ չի ստացվում, մտահոգվում ենք: Առավոտյան աշխույժ ենք կամ քնկոտ, իսկ երբ ընկերների հետ խաղում ենք բակում, ուրախ ենք ու զվարթ... Դրանք հույզեր են, որ փոփոխվում են և հետաքրքիր ու գունեղ դարձնում մեր կյանքը: Առանց հույզերի դժվար կլիներ հասկանալ, թե ով ինչ է զգում, ինչ է ուզում, ինչ է սիրում, ինչ չի սիրում և ինչն է, որ տխրեցնում կամ ուրախացնում է քեզ շրջապատող մարդկանց: Չէ՞ որ դա կարևոր է, և բոլորս էլ ուզում ենք դրական հույզեր պարգևել մեր մտերիմներին:



3. Իսկ կարո՞ղ է եղանակը կամ միջավայրը ազդել մեր հույզերի, զգացումների վրա:

Եկեք միասին երգենք.

Երբ արև է, ես ուրախ եմ,
Երբ անձրև է, ես տխուր եմ,
Երբ կարկուտ է, ես շտապում եմ
Թաքնվել ծածկի տակ:



Երբ ամպրոպ է, տագնապած եմ,
Երբ կայծակ է, վախեցած եմ:
Երբ քամի է, ես մրսում եմ,
Տաք չեմ հագնված:

Երբ անձրևը վերջանում է,
Ծաղիկները նուրբ բուրում են,
Ծիածանը ծիկրակում է,
Իսկ ես՝ հիացած:





4. Նայե՛ք նկարներին և փորձեք կռահել, թե ինչ հույզ է պատկերված, անվանեք այդ հույզը:



- Տարբերակե՛ք՝ որոնք են դրական հույզեր, որոնք՝ բացասական:



5. Քաշե՛ք քարտերը և պատասխանե՛ք հարցերին:

1-ին իրավիճակ Դու վերջացրել ես դասերդ ու արագ-արագ վազում ես բակ՝ ճոճանակին ճոճվելու: Հանկարծ տեսնում ես, որ բոլոր ճոճանակներն զբաղված են: • Ի՞նչ կզգաս:	2-րդ իրավիճակ Դպրոցում դասերն ավարտվել են, բոլոր ընկերներիդ ծնողներն եկել են իրենց հետևից, իսկ քո ծնողներն ուշանում են: • Ի՞նչ կզգաս:
3-րդ իրավիճակ Ընկերներիդ հետ սեղանի խաղ եք խաղում, և դու շատ լավ խաղաքարեր ունես, հաստատ հաղթող ես լինելու: Հանկարծ շունը ցատկում ու խառնում է խաղատախտակը: • Ի՞նչ կզգաս:	4-րդ իրավիճակ Հայրիկն ու մայրիկը գնում են խնջույքի, դու էլ շատ ես ուզում գնալ նրանց հետ, բայց քեզ չեն տանում: Դու մնալու ես մեծ եղբորդ հետ, որն անընդհատ հոգուդ հետ խաղում է: • Ի՞նչ կզգաս:
5-րդ իրավիճակ Շաբաթ օրը քո լավագույն ընկերոջ տանը խաղի եք իրավիճակված, և դու անհամբեր ես: Բայց շաբաթ առավոտյան ընկերոջդ մայրիկը զանգահարում է ու ասում, որ ընկերդ հիվանդացել է: • Ի՞նչ կզգաս:	6-րդ իրավիճակ Մայրիկի ու հայրիկի հետ սրճարանում եք, հանկարծ տեսնում ես, որ ձեր կողքի սեղանի մոտ նստած է քո սիրած ֆիլմի դերասանը, որին դու շատ ես սիրում: • Ի՞նչ կզգաս:
7-րդ իրավիճակ Դու շատ գեղեցիկ պատկեր ես նկարել արվեստի ժամին, և ուսուցիչն այն փակցրել է դպրոցի պատին: Բոլորն ասում են, որ շատ գեղեցիկ ես նկարել: • Ի՞նչ կզգաս:	8-րդ իրավիճակ Կարուսելի ատրակցիոններից մեկը շատ արագ ու կտրուկ է պտտվում, ու շուտով նստելու ձեր հերթը կհասնի: • Ի՞նչ կզգաս:



6. Մնջախաղ ենք խաղում:

Ցո'յց տվեք ձեր ունեցած զգացմունքը կամ հույզը, այնպես, որ առանց բառն ասելու՝ ընկերներդ կռահեն այն:



7. Մտածե՛ք և պատասխանեք հարցերին:

- Ի՞նչ կանեք, եթե տեսնեք, որ ձեր ընկերը լալիս է:
- Ի՞նչ կանեք, եթե զգաք, որ մայրիկը հոգնած է:
- Ի՞նչ կանեք, եթե ձեր ընկերը տխուր է, իսկ մյուսները չեն էլ նկատում ու զվարճանում են:
- Ի՞նչ կանեք, եթե բոլորը ծաղրում են մեկին, իսկ նա մեկուսացել և վիրավորանքից լալիս է:

ԴԱՍ 3 – ԵՐԲ ԵՍ ՓՈՔՐ ԷՒ ԵՎ ԵՐԲ ԵՍ ՄԵԾԱՆԱՄ



- Քանի՞ տարեկան եք: Հիշում եք ձեր ծննդյան օրը: Ե՞րբ էր դա: Քանի տարի առաջ:
- Հիշում եք ձեզ մեկ տարեկանում, իսկ երկու, իսկ երեք: Ո՞րն է ձեր առաջին մանկական հիշողությունը, պատմե՛ք: Ե՞րբ է դա կատարվել:

- Երբ մենք պատմում ենք որևէ կատարված իրադարձության մասին, ուրեմն դա արդեն անցյալում է:
 - Երբ խոսում ենք հիմա կատարվող իրադարձության մասին, դա մեր ներկան է, որը շատ արագ, կատարվելուն պես դառնում է անցյալ:
 - Իսկ այն իրադարձությունները, որոնք դեռ չեն կատարվել, բայց կարող են կատարվել, մեր ապագան են:
- Որպեսզի հասկանանք, թե որ ժամանակի մասին ենք խոսում, հաճախ օգտագործում ենք բառեր, որոնք ավելի հասկանալի են դարձնում ասելիքը և հուշում են, թե որ ժամանակվա մասին է խոսքը:
- Օրինակ՝ երեկ, երկու օր առաջ, վաղը, հինգ տարի առաջ, հենց հիմա, տասը տարի հետո, թվականներ ենք օգտագործում, ամսաթվեր և այլն: Այս ամենը ավելի պարզ ու հասկանալի է դարձնում, թե ինչի մասին ենք խոսում և երբ է կատարվել:

1. Լրացրո՛ւ թերթիկը՝ պատմելով քո մասին: Ի՞նչ հետաքրքիր և հիշվող իրադարձություններ են եղել քո կյանքում, որ կուզենաս պատմել մեզ:

Անուն

Իմ կյանքի կարևոր իրադարձությունները

Ես ծնվել եմ

0

1 տ.

2 տ.

3 տ.

4 տ.

5 տ.

6 տ.

7 տ.

Click and drag the box borders to move. Click and drag the arrow to move.

- Կարող եք նկարել, լուսանկարներ փակցնել, գրել...



2. Թուղթը բաժանիր երեք մասի, ինչպես նկարված է օրինակում և լրացրու վանդակներից յուրաքանչյուրը՝ շարունակելով նախադասությունները: Պատմի՛ր քո անցյալի, ներկայի և երազած ապագայի մասին: Կարող ես նկարել, գծել, գրել, լուսանկարներ փակցնել:


Երբ ես փոքր էի...

Հիմա ես...

Երբ մեծանամ...



3. Իմ պատկերացրած ապագան:



- Այն, ինչ երազում ենք, մի՞շտ է կատարվում:
- Ի՞նչ կարող ենք անել, որ մեր նպատակներին հասնենք, իրագործենք և մեր երազած ապագան իրականություն դառնա:



Տնային հանձնարարություն

Մտածիր տարբեր ժամանակների և ապագայի մասին, եթե կարող ես, հարցուփորձ արա, տեղեկություններ փնտրիր համացանցում և հաջորդ դասին ներկայացրու ընկերներիդ:

- Երբ քո ծնողները փոքր են եղել...
- Երբ քո տատիկ-պապիկները փոքր են եղել...
- Երբ դու մեծանաս և պապիկ կամ տատիկ դառնաս...

ԴԱՍ 4 – ԻՆՉՊԵՍ ԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՕՐՍ

1.

- Ինչպե՞ս ենք սկսում մեր օրը:
- Ի՞նչ գործողություններ ենք կատարում օրվա ընթացքում:
- Ո՞ր գործողություններն են, որ անփոփոխ ամեն օր կատարում ենք:
- Մեր բոլոր օրերը նմա՞ն են իրար:
- Նմա՞ն են արդյոք շաբաթվա բոլոր օրերը:
- Շաբաթվա ո՞ր օրն է տարբերվում, ինչո՞ւ:
- Դու ինչպե՞ս կցանկանայիր անցկացնել այդ օրը:



2. Ընկերներիդ հետ ուսումնասիրի՛ր նկարները և դասավորի՛ր ըստ գործողությունների կատարման հաջորդականության:



- Ներկայացված նկարներում կա՞ այնպիսի գործողություն, որը կարող ես չանել: Եթե կա, ո՞րն է:
- Ի՞նչ կլինի, եթե միշտ այդ գործողությունը չանեք:
- Կա՞ն այնպիսի գործողություններ, որոնք անպայման կրկնվում են ամեն օր: Որո՞նք են:
- Իսկ կա՞ն այնպիսիները, որոնք պարտադիր չէ, որ ամեն օր կրկնվեն: Որո՞նք են:

3. Թուղթը բաժանի՛ր չորս մասի և լրացնելով վանդակներից յուրաքանչյուրը՝ գրիր՝ օրվա որ ժամանակահատվածում ինչով ես զբաղվում:

Առավոտ	Կեսօր	Երեկո	Գիշեր



Ձո՛ւյգ կազմեք և համեմատեք լրացրած թերթիկները:

- Ինչո՞վ են նման և տարբեր ձեր օրվա ռեժիմները:

4.

- Օրվա ռեժիմը ամբողջ օրվա քո գործունեության ճիշտ ու խելացի բաշխումն է:
- Եթե ռեժիմը պահպանես, կհասցնես այն ամենը, ինչ անհրաժեշտ է կատարել օրվա ընթացքում:
- Օրվա ռեժիմում կարևոր է ներառել նաև ֆիզիկական աշխատանքը, մարմնամարզությունը, պարը կամ զբոսանքը մաքուր օդին, ինչպես նաև բավարար քունը և հանգիստը:

5. Նայի՛ր այս նկարներին, պատկերված մարդիկ ունեն իրենց զբաղմունքները: Նրանք այդպես հանգստանում են, կազմակերպում են իրենց ազատ ժամանակը կամ ներկայացնում են իրենց մասնագիտությունը:

- Այստեղ կա՞ն զբաղմունքներ, որոնք քեզ նույնպես դուր են գալիս, որոնցով դու նույնպես կցանկանաս զբաղվել ազատ ժամանակ:





Դուրս եկեք ազատ տարածք, ընտրե՛ք ձեր սիրած զբաղմունքը, մնջախաղով՝ առանց խոսելու, միայն շարժումներով ցույց տվեք այն ընկերներին այնպես, որ նրանք կարողանան կռահել և խմբվել միասին նույն զբաղմունքը ցույց տվողների հետ: Փորձե՛ք:

- Հե՛շտ էր ցույց տալը:
- Ձեզ նման նախասիրություններով ընկերների գտա՛ք:
- Ո՞ր նախասիրությունն էր ամենից շատ կրկնվածը:
- Իսկ ո՞րն էր յուրահատուկ, եզակի:

6. Նկարի՛ր և ներկայացրու՝ դու ինչպես ես կազմակերպում քո ազատ ժամանակը:




Տնային աշխատանք

Կազմի՛ր հանգստյան օրվա ռեժիմ:

ԴԱՍ 5 – ԻՄ ՄԱՐՄԻՆԸ



1. Անվանեք ձեզ հայտնի մարմնի մասերը և գրեք վանդակներում:



- Կա՞ն մարմնի մասեր, որոնք կարող եք անվանել, բայց դրանց անվանումների վանդակներ նշված չեն:
- Քանի՞ ոտքի մաս կարող եք անվանել: Իսկ ձեռքի՞:
- Որո՞նք են գլխի վրա գտնվող մասերը:
- Մարմնի ո՞ր մասերով ենք ճանաչում աշխարհը, նշեք:



2. Որոշիր և դասակարգիր, թե մարմնի որ մասին են վերաբերում հետևյալ բառերը. աչք, դաստակ, կզակ, ափ, սրունք, բերան, բազուկ, թարթիչներ, ուս, մազեր, գոտկատեղ, քիթ, մեջք, մատներ, կրծքավանդակ, թիկունք, փոր, ազդր, այտ, արմունկ, ծունկ, ճակատ, վիզ, հոնքեր, ոտնաթաթ, ծնոտ, ծոծրակ, սրունք, ականջ, կրունկ, քունք, թևատակ:

Գլուխ	Ոտք	Ձեռք	Իրան



3. Խմբով քննարկեք և պատասխանեք հարցերին:

- Ինչի՞ համար է մեզ պետք գլուխը:
- Ինչի՞ համար են ոտքերը:
- Ինչի՞ համար են ձեռքերը:
- Ինչի՞ համար են աչքերը:
- Ինչի՞ համար է բերանը:
- Ինչի՞ համար են ականջները:
- Ինչի՞ համար է քիթը:

4.

Բոլոր մարդիկ տարբեր են և ունեն տարբեր մարմնակազմվածք: Մեկը բարձրահասակ է, մյուսը՝ ցածրահասակ, երրորդը թմբիկ է ու բարձրահասակ, չորրորդը փոքրիկ է, բայց արագաշարժ, իսկ մեկ ուրիշն էլ այնքան երկար ձեռքեր ունի, որ միշտ պահարանից իրեր իջեցնելն իրեն են խնդրում: Բոլորս տարբեր ենք ու յուրահատուկ, յուրաքանչյուրս ուժեղ ենք ինչ-որ բանում, բայց գուցե թույլ՝ մեկ այլ բանում: Կարևորը, որ օգնենք ու լրացնենք իրար: Կարող են լինել մարդիկ, որ լավ չեն տեսնում կամ լավ չեն լսում, գուցե ոտքն է վնասված, կամ ձեռքն է ցավում: Չէ՞ որ բոլորս էլ կարող ենք մի օր վատ զգալ կամ

հիվանդանալ, նույնիսկ հենակի կամ սայլակի կարիք ունենալ: Սակայն դա մեզ չի խանգարում լինել բարի, սիրել միմյանց, հասնել օգնության, երբ դրա կարիքը որևէ մեկն ունի: Անկախ նրանից, թե ինչպիսի արտաքին ունենք մենք, բոլորս ունենք արժանիքներ, որոնք շատ կարևոր են: Եկեք ճանաչենք ու գնահատենք միմյանց արժանիքները:





5. Ամեն նկարի շուրջ մի փոքրիկ պատմություն հորինեք:




ԴԱՍ 6 - ԻՄ ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐԸ



1. Գծերով միացրու նկարին, թե ինչով ես զգում:

Ես տեսնում եմ



Ես համտեսում եմ

Ես լսում եմ

Ես հոտ եմ առնում

Ես շոշափում եմ

2. Գծերով միացրու այն զգայարանին, որով կարող ես զգալ նկարում պատկերվածը: Մեկ նկարից կարող ես մի քանի գիծ տանել:



- Գտի՛ր մի բան, որը լավ բույր ունի:
- Գտի՛ր մի բան, որը փափուկ է:
- Գտի՛ր մի բան, որն աղմկոտ է:
- Գտի՛ր մի բան, որը քնքուշ է:
- Գտի՛ր մի բան, որը հեռու է:
- Գտի՛ր մի բան, որը գեղեցիկ է:
- Գտի՛ր մի բան, որը շատ համեղ է:
- Գտի՛ր մի բան, որը հյուսթեղ է:



3. Խաղում ենք «Համով-հոտով» խաղը:

- 4.** Նայե՛ք նկարին, փորձեք առաջարկել այնպիսի տարբերակ, որ բոլորն օգտվեն հավասար հնարավորություններից:



ԴԱՍ 7 - Հիգիենա 1



1. Նայե՛ք նկարում պատկերված առարկաներին և ասե՛ք՝ ինչ ընդհանուր բան կա դրանց մեջ:



- Իսկ ի՞նչ կլիներ, եթե այդ առարկաները չլինեին:



2. Բոլորի տներում կա՞ն հիգիենայի պարագաներ:

- Ինչի՞ համար են հիգիենայի պարագաները:
- Կա՞ն պարագաներ, որոնք ընդհանուր են ընտանիքի բոլոր անդամների համար:
- Որո՞նք են, թվե՛ք դրանք:
- Թվե՛ք այն պարագաները, որոնք անհատական են, յուրաքանչյուրն իրենն ունի, դուք էլ՝ ձերը:
- Ինչու՞ այդ առարկաները պետք է միայն ձերը լինեն, ինչու՞ օրինակ, ձեր ատամի խոզանակը չեն կարող ուրիշներն օգտագործել:



3. Կարմիր շրջանակի մեջ վերցրու այն իրերը, որոնք անհատական օգտագործման համար են, իսկ կապույտի մեջ՝ այն իրերը, որոնցից ընտանիքում կարող եք բոլորդ օգտվել:



4. Համեմատե՛ք նկարները, քննարկե՛ք և պատասխանե՛ք հարցերին:



- Ինչո՞վ են տարբերվում նկարները:
- Ո՞ր նկարն է ձեզ դուր գալիս: Ինչո՞ւ:
- Իսկ ի՞նչ կլինի, եթե չպահպանենք հիգիենայի կանոնները:
- Ի՞նչ կպատահի, եթե առնետները, խավարասերները, ճանճերը բույն դնեն մեր բնակարաններում: Ի՞նչ կլինի, եթե շրջապատը կեղտոտ լինի:
- Ինչո՞ւ է կարևոր մաքրությունը:
- Ի՞նչ ենք անում և ի՞նչ կարող ենք անել, որպեսզի մեր շրջապատը, տունը, աշխատատեղը մաքուր լինեն:

5. «**Օգնենք Պետիկին**»: Պետիկը դպրոցական է: Նա իր առանձին սենյակն ունի, բայց ոչ մի կերպ չի կարողանում այն կոկիկ պահել: Օգնե՛ք Պետիկին, հուշե՛ք, թե որ իրն ուր պիտի դնի, որ սենյակը հավաք լինի:



- Օգնելու համար համապատասխանեցրեք աջ և ձախ սյունակները:

Սենյակում թափափված իրերն են	Իրերը պետք է՝
1. կեղտոտ վերնաշապիկ	ա) դնել կոշիկների դարակում
2. թափափված անկողին	բ) դնել կեղտոտ իրերի զամբյուղը
3. գուլպա	գ) մյուս զույգի հետ դնել դարակում
4. կոշիկներ	դ) հարդարել
5. դպրոցական պայուսակ	ե) կոկիկ դասավորել գրասեղանի վրա
6. խաղալիքներ	զ) դնել պատուհանագոգին
7. ընկած ծաղկաման	է) տանել և դնել զուգարանում
8. բասկետբոլի գնդակ	ը) տեղավորել խաղալիքների դարակում
9. դասագրքեր	թ) դնել գրասեղանի դարակում
10. զուգարանի թուղթ	ժ) դնել մարզասենյակում



- Միշտ մաքուր լինելու համար ի՞նչ է հարկավոր անել:
- Ի՞նչ կլինի, եթե ձեռքերը մաքուր չպահենք:
- Ե՞րբ է պետք ձեռքերը լվանալ:
- Ի՞նչ կլինի, եթե չլողանանք:
- Ի՞նչ կլինի, եթե չհետևենք ատամների մաքրությանն ու խնամքին:



6. Ֆիլմի դիտում.

- Ինչպե՞ս եք սովորաբար լվանում ձեռքերը, ցույց տվեք այն շարժումները, որով սովորաբար լվանում եք ձեռքերը:
- Հիմա դիտենք ֆիլմ ձեռքերը ճիշտ շարժումներով լվանալու մասին:
https://www.youtube.com/watch?v=9x4_n-730hY
- Կա՞ր տարբերություն ձեր շարժումների և ձեռքերը ճիշտ լվանալու շարժումների միջև:

7. Նայեք ձեռքերը լվանալու քայլերի հաջորդականությանը և փորձեք ինքներդ էլ հետևել լվացվելու ճիշտ կանոններին:



Հիմա փորձեք ճիշտ քայլերի հերթականությամբ ցույց տալ, թե ինչպես պետք է լվանալ ձեռքերը:

8. Իսկ գիտե՞ք, որ ատամներն էլ կարելի է ճիշտ և սխալ շարժումներով լվանալ:

- **Հիմա դիտենք ֆիլմ ատամները ճիշտ լվանալու մասին**

<https://www.youtube.com/watch?v=PADuVlfBPgo> / 6:18 – 7:33ր/

- Նայեք պաստառին, ուսումնասիրեք՝ ինչպես են լվանում ատամները:



- Մոտեցի՛ր պաստառին և վերցնելով խոզանակը՝ ցույց տուր ատամները լվանալու շարժումները:



Տնային հանձնարարություն

- Դու ի՞նչ ես անում, որ մաքուր լինես:
- Մտածի՛ր և կազմի՛ր աղյուսակ՝ նշելով կոկիկ, մաքուր լինելու համար անհրաժեշտ մի քանի կանոններ:

ԴԱՍ 8 – Հիգիենա 2



- Առողջ լինելու համար կարևոր է միշտ մաքուր լինել:
- Ի՞նչ պետք է անել դրա համար:
- Ի՞նչ կլինի, եթե չլողանանք, անխնամ թողնենք եղունգները, մազերը, դեմքը, մարմինը:



1. «Մաքուր լինենք»

Լողանք

- **Տրված նախադասությունները դասավորե՛ք տրամաբանական հաջորդականությամբ:**

1. Մտնել ցնցուղի տակ, ոտից գլուխ մի լավ օճառվել:
2. Պատրաստել մաքուր սպիտակեղենը և հագուստը, մաքուր սրբիչ վերցնել:
3. Հագնվել, փակել ծորակները:
4. Ջուրը բացել, ստուգել ջրի ջերմաստիճանը, հանվել:
5. Օճառը վրայից լվանալ, դուրս գալ ցնցուղի տակից, սրբիչով չորացնել մարմինը:



Ատամները մաքրելը

- **Տրված նախադասությունները դասավորե՛ք տրամաբանական հաջորդականությամբ:**


1. Բերանը մի քանի անգամ ջրով ողողել:
2. Խոզանակի թերթն սեղմումներով վերից վար շփել բոլոր ատամները:
3. Ատամի մածուկի տուփը փակել և տեղը դնել:
4. Բաժակով ջուր վերցնել:
5. Խոզանակը թրջել և վրան սիսեռի հատիկի մեծության մածուկ քսել:



Դեմքը լվանալ

- **Տրված նախադասությունները դասավորե՛ք տրամաբանական հաջորդականությամբ:**

1. Օճառը շրջանաձև շարժումներով տարածել դեմքին:
2. Ձեռքերը օճառել դեմքի օճառով:
3. Սառը ջրով լվանալ դեմքը և մաքուր սրբիչով չորացնել:
4. Մազերը դեմքից հետ տանել կամ կապել, որ դեմքին չթափվեն:
5. Դեմքին սառը ջուր շփել:



Ձեռքերի խնամք

- **Ամբողջացրեք նախադասությունները՝ օգտվելով աջ և ձախ սյունակներից:**




- | | |
|--|--------------------------|
| 1. Եղունգները երկարել են, հարկավոր է | ա) ձեռքերը օճառով լվանալ |
| 2. Բակից տուն գալով՝ հարկավոր է | բ) կտրել կամ խարտել |
| 3. Եթե ձեռքերը ճաքճքել են, հարկավոր է | գ) սրբիչով չորացնել |
| 4. Եթե կենդանու հետ եք խաղացել, պետք է | դ) կրեմ քսել |
| 5. Ձեռքերը լվանալուց հետո հարկավոր է | ե) օճառով լվացվել |

2. Բերանի խոռոչի խնամքը

- Կարդացե՛ք թերթիկի վրա գրված կանոնները:
- Եթե այդ կանոններից որևէ մեկը չեք կատարում, ատամի վրա դրեք մի սև կետ:
- Հիմա հաշվեք՝ քանի՛ կետ եք դրել:

Կանոններ

1. Ատամներով ընկույզ, կորիզ, պինդ կոնֆետներ չկոտրել:
2. Քնելուց առաջ ատամները լվանալ:
3. Չափից շատ քաղցրավենիք չուտել:
4. Տաք կերակուրներից հետո անմիջապես սառը չուտել, չխմել:
5. Ուտելուց հետո բերանը ողողել, ծամոն ծամել:
6. Եթե զգում եք, որ ատամը վտանգված է, դիմել բժշկի:



3. «Գիտե՛ս արդյոք»

- Թերթիկների վրա գրված կանոնները համապատասխանեցրե՛ք նկարներում պատկերված գործողություններին:

Ճաշելիս 	Լողանալիս 
Արթնանալուց հետո 	Քնելուց առաջ 

**Դրսից տուն գալուց
հետո**



Աչքի և ականջի խնամք



Ձեռքերի և եղունգների խնամք



Մաշկի և ոտքերի խնամք



**Մազերի
խնամք**



Կոփվել



Կանոններ

• Անկողինը հավաքել	• Ցնցուղ ընդունել	• Պառկած չկարդալ
• Լվացվել	• Երեսը լվանալ	• Հագուստը փոխել
• Ատամները մաքրել	• Լոգանք ընդունել	• Հագուստը կախել պահարանում
• Ձեռքերը լվանալ	• Կոշիկները սրբել	• Ննջարանը օդափոխել
• Միրգ-բանջարեղենը լվանալ	• Ականջները մաքրել	• Եղունգները կտրել
• Սպիտակեղենը փոխել	• Օգտվել դանակ-պատառաքաղից	• Անձեռոցիկ օգտագործել
• Անձնական սրբիչ օգտագործել	• Ուտելիս արմունկները սեղանին չդնել	• Ծամելով չխոսել
• Մազերը հաճախ լվանալ	• Ամեն օր լվանալ ոտքերը	• Կեղտոտ սրբիչից կամ ձեռքերից աչքերը կարող են բորբոքվել
• Կոշիկները պետք է հարմար լինեն, ոտքերը չսեղմեն	• Եղունգները շատ խորը չկտրել	• Առանձին սանր ունենալ, ուրիշի սանրով չսանրվել, սանրը ուրիշի չտալ
• Հաճախ փոխել սպիտակեղենը	• Ականջները չի կարելի մաքրել լուցկու հատիկով, քորոցով	• Վատ լուսավորված սենյակում կարդալը վնասում է տեսողությունը



4. Մտածե՛ք, քննարկե՛ք և պատասխանե՛ք:

- Բոլոր՞ր կանոններն էին ձեզ ծանոթ:
- Կայի՞ն կանոններ, որոնք սովորաբար չեք կիրառում: Որո՞նք էին:
- Ո՞ր կանոններին համաձայն չեք: Ինչու՞:
- Ի՞նչ կանոններ եք կիրառում ձեր ընտանիքում, որոնք այստեղ հիշատակված չեն:
- Ինչի՞ց է պաշտպանում մեզ այս կանոնների կիրառումը:



5. « Մարզվում եմ՝ առողջ եմ»

- Ի՞նչ է լինում, երբ մարդ քիչ է շարժվում, ալարկոտ է, ծանրաշարժ:
- Իսկ ինչու՞ է հարկավոր շարժվել:
- Ի՞նչ են անում նկարում պատկերված երեխաները:
- Ի՞նչ կարող ենք անել, որ մարզվելը դառնա նաև հետաքրքիր ժամանց, կամ ժամանցն այնպես կազմակերպենք, որ նաև մարզվենք:





- Իսկ դուք սիրո՞ւմ եք խաղալ բակում:
- Դուք ի՞նչ խաղեր եք խաղում:
- Ո՞ր խաղերն եք ավելի շատ սիրում:
- Իսկ ո՞վ է սպորտի գնում:
- Ի՞նչ սպորտաձևով եք զբաղվում:



Տնային հանձնարարություն

Նկարագրի՛ր

- Ինչպիսի՞ն կլինեն մշտապես մարզվող մարդիկ:
- Ինչպիսի՞ն կլինեն այն մարդիկ, որոնք ամբողջ օրը նստած են համակարգչի առաջ կամ խաղում են հեռախոսով:



ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ
2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
ԹԵՄԱ 2 – ԵՍ ԱՊԱՀՈՎ ԵՄ
Աշակերտի ուսումնական նյութ

© Լուսինե Ալեքսանյան, Հասմիկ Անտոնյան

ԹԵՄԱ 2 – ԵՍ ԱՊԱՀՈՎ ԵՄ

ԴԱՍ 1 – ԻՆՉ ԵՆՔ ՈՒՏՈՒՄ



1.

- Ինչու՞ են մարդիկ ուտում:
- Ի՞նչ կլինի եթե չուտեն:
- Ո՞վ ինչ է սիրում ուտել:
- Իսկ կա՞ն բաներ, որ չեք սիրում: Ի՞նչը:
- Որտեղի՞ց ենք ստանում տարբեր սննդամթերքները:



2. Խմբվեք ըստ ձեզ բաժին ընկած սննդամթերքի քարտի շրջանակի գույնի:

- Ի՞նչ ընդհանրություն կա յուրաքանչյուր խմբի քարտերի մթերքների միջև:
- Կարո՞ղ եք ամեն խմբին անուն տալ:

Սննդամթերքի նկարներով քարտեր

ապուխտ	մակարոն	ոլոռ	պղպեղ
տոլմա	հնդկաձավար	հատիկ լոբի	ձմերուկ

երշիկ	դեղձ	նրբերշիկ	խորոված
			
հավ	Կրեմով տորթ	ծիրան	սունկ
			
կաթնաշոռ	թթվասեր	կաղամբ	բազուկ
			
վարունգ	յուզուրտ	խնձոր	կարագ
			
սխտոր	գաթա	հարիսա	նուռ
			
կաթ	հազար	ծեթ	մրգահյութ
			

բորոն	բուլկի	Խոզի ճարպ	մածուն
			
ծուկ	Ադի-բուդի	լոլիկ	պանիր
			
քյուֆթա	լավաշ	ընկուզեղեն	չիր
			
կեռաս	գազար	ծու	տանձ
			

ձու-մսեղեն-լոբազգիներ



միրգ-բանջարեղեն



հացեղեն-ձավարեղեն



յուղեր



կաթնեղեն



3. Կռահեք հանելուկները և ասեք, թե գուշակած մթերքները սննդային որ խմբին են պատկանում:

Հանելուկներ

Քջջում է, չի թռչում, Ձու է ածում, կչկչում:	Շեկլիկ աղվեսը խոր բնում նստել, Կանաչ պոչիկը դրսում է թողել:
Ցանեմ, քաղեմ, աղամ, մաղեմ, Ջրով բացեմ փուռը դնեմ, Կարմիր հանեմ, պանրով ուտեմ:	Ափ անեմ, ծափ անեմ, Բարձին ձգեմ, պատին խփեմ, Թխած հանեմ, բրդում անեմ:
Հեղուկ է՝ ջուր չէ, Ճերմակ է՝ ձյուն չէ:	Ունեմ կճում մի պուճուր, Մեջը՝ երկու գույնի ջուր:
Ամբողջ օրը հարեցի, Մի մեծ կաթսա եփեցի: Ի՞նչ շիլա է, դե ասա՝ Համով-հոտով	Ձեզ քաջ ծանոթ մի տիկին Յոթ շապիկ ունի հագին: Ով շապիկները հանի՝ Դառն արտասուք կթափի:
Կլորիկ չեմ խնձորի պես, Կաթող մեղրի ձև ունեմ ես, Անուշ միրգ եմ, աշնան գանձ, Ինձ ասում են համեղ ...	Կանաչ գնդակ գնեցինք, Սուր դանակով կտրեցինք, Կարմիր ջուրը խմեցինք, Սև քարերը թափեցինք:
Ինքնահավան մի թռչուն Փքված շրջում է բակում, Ով իմանա, թե ինչու, Նրան հնդիկ են կոչում:	Կաթը տարան-բերեցին, Միջից դեղին հանեցին, Հացի վրա քսեցին, Մեղրով անուշ արեցին:
Թներ ունի, չի թռչում, Ածան է, չի կչկչում, Այնտեղ, ուր մենք ենք շնչում,	Ի՞նչ պտուղ է կոշտ ու կոպիտ, Կեղև ունի փայտի պես պինդ, Մեջը անուշ յուղոտ խորիզ,

Իսկույն իր շունչն է փչում:	Չունի սակայն ոչ մի կորիզ:
Կաթից սարքած, Երկար պահած, Դրսում թողած՝ Մկան տարած:	Կանաչ արոտից բերած, Ճերմակ հեղուկից մերած, Առավոտը արթնանամ, Մի կուշտ ուտեմ, զորանամ:
Ճերմակ-ճերմակ հատիկներ, Հարսի գլխին ծաղիկներ: Չինացուն՝ հաց սիրելի, Զատկին՝ փլավ յուղալի:	



4. Փորձեք ձեր ստացած քարտերը դասակարգել ըստ դրանց ծագման (կենդանական են, թե՛ բուսական) և գրանցեք աղյուսակում:

Բույսերից ստացվող սննդամթերք	Կենդանիներից ստացվող սննդամթերք



- 5.** «Մի ամառային օր Լուսինեն, Գրիգորը, Անին, Տիգրանը, Սուրենն ու Մանեն գնացել էին արշավի: Երկար խաղալուց ու զբոսնելուց հետո սովածացան: Նստեցին մի ծառի ստվերում, ու ամեն մեկն իր բերած նախաճաշիկը բացեց» : Ուշադիր նայեք յուրաքանչյուրի նախաճաշի մթերքներին : Ու՛մ նախաճաշն է պարունակում ամեն տեսակի մթերքներից, ումը՝ ոչ:
- Նրանցից ով ինչ կարող է հյուրասիրել ընկերոջը, որ բոլորն էլ ուտեն հինգ տեսակի մթերքներից:

Լուսինեի նախաճաշիկը  Լավաշ, պանիր, թարխուն, խաշած ձու, խնձոր	Տիգրանի նախաճաշիկը  Հաց ու երշիկ, լոլիկ, վարունգ, թթվասեր	Գրիգորի նախաճաշիկը  Մածուն, չամիչով բուլկի
Անիի նախաճաշիկը  Կոտլետներ, սպանախ, մրգահյութ	Սուրենի նախաճաշիկը  Ապուխտ, կաթ	Մանեի նախաճաշիկը  Հարիսա, բանան



Տնային հանձնարարություն

Փորձեք՝ ընտանեկան ճաշին և ընթրիքին եղած կերակուրները դասակարգել ըստ դրանց ծագման, կենդանական էին, թե բուսական, և աղյուսակ կազմել:

Բուսական	Կենդանական

ԴԱՍ 2 - ԻՆՉՊԻՍԻՆ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՄՆՈՒՆԴԸ

1. Կարդացեք և քննարկեք հարցերը:



Պարզվում է՝ մեր մարմինն էլ, մեքենաների պես, աշխատելու համար վառելիքի կարիք ունի: Իսկ ո՞րն է այդ վառելիքը, կարո՞ղ եք ասել: Այո՛, սնունդն է, չէ՞ որ մենք երկար չենք կարող սոված դիմանալ, անմիջապես կզգանք, որ հոգնել ենք, թուլացել և նոր վառելիքի կարիք ունենք: Իսկ ջո՞րը: Արդյոք կարո՞ղ ենք երկար դիմանալ առանց ջրի: Իհարկե՛ ոչ: Ջուրը նույնպես մեր մարմնին անհրաժեշտ վառելիքներից է, առանց որի անհնար է առույգ ու առողջ լինել: Մնունդն ու ջուրը մեր մարմնի շինանյութերն են: Ինչպիսին մեր սնունդն է, այնպիսին էլ մեր մարմինն է: «Առողջ սնունդ՝ առողջ մարմին» կարգախոսը եկեք դարձնենք մերը և հետևենք դրան:

- Ի՞նչ կլինի, եթե ամեն օր չսնվենք:
- Ի՞նչ կլինի, եթե մի քանի օր ջուր չխմենք:
- Ի՞նչ կլինի, եթե ուտենք, բայց քիչ շարժվենք ու չխաղանք:
- Ի՞նչ կլինի, եթե ձեռքերը չլվանանք, ատամները չմաքրենք:
- Ի՞նչ կլինի, եթե քիչ քնենք, չհանգստանանք:
- Ինչ կլինի, եթե մաքուր օդին չզբոսնենք:

2. Տեսնենք, թե մեր մարմնին որ խմբի սննդամթերքներն են անհրաժեշտ:

- Կաթնեղենը ամրացնում է քո ոսկրերն ու ատամները:






- Ձու-մսեղեն-լոբազգիները օգնում են, որ դու աճես ու մեծանաս:



- Միրգ ու բանջարեղենը քո մարմնին առողջություն ու հմայք են տալիս, որ միշտ գեղեցիկ ու առույգ լինես:



- Հացեղեն-ծավարեղենը քեզ եռանդուն են դարձնում:

- Յուղերը նույնպես եռանդ են տալիս, բայց դրանք պետք է չափավոր ուտել, որ չգիրանաս:



	• Ուտելիքը պետք է բազմազան լինի, պետք է պարունակի վերևում թվարկված բոլոր խմբերի սննդամթերքներից: Բայց ինչ-որ բաներ ավելի շատ է պետք ուտել, ինչ-որ բաներ՝ ավելի քիչ:
	• Տեսե՛ք, սա սննդային բուրգն է, ամենաներքում ամենամեծ բաժինն է, մեր սննդի մեջ ամենշատը պետք է լինեն հացեղեն-ձավարեղեն, հաջորդ մեծ խումբը՝ միրգ-բանջարեղենն է, որը պետք է ավելացնել մեր ուտելիքի մեջ, հետո՝ ավելի փոքր քանակով պետք է ուտենք կաթնեղեն և մսեղեն, իսկ ամենաքիչը մեր սննդակարգում պետք է օգտագործվեն յուղերն ու քաղցրեղենը: Դրանց չարաշահումը կարող է վնասել մեր առողջությունը:



3. Եկեք մի փորձ կատարենք, որպեսզի հասկանանք, թե ինչու են քաղցր ըմպելիքները, քաղցրավենիքը վնասակար:

- Վերցնենք նախապես կոտրած և լվացած ձվի կճեպի երկու կեսը:
- Տեղավորենք բաժակների մեջ, մեկի վրա լցնենք ջուր, մյուսի վրա՝ քաղցր հյութ, կոկա-կոլա կամ ֆանտա:
- Եկեք սպասենք մեկ շաբաթ, հետո կհանենք կճեպները և կտեսնենք թե ինչ փոփոխություն է եղել:



Ձվի կճեպի բաղադրությունը շատ նման է մեր ատամների բաղադրությանը:

- Ի՞նչ հետևություն կարող եք անել :
- Բացատրի՛ր, թե այդքան քաղցրը ինչպես կարող է ազդել քո ատամների վրա:



Առողջ սնվելու մի քանի կանոն.

1. Սնունդը պետք է բազմազան լինի, պարունակի բոլոր խմբերի մթերքներ:
2. Սնունդը պետք է ընդունել օրվա նույն ժամերին, անկանոն ռեժիմը կարող է վնասել առողջությունը:
3. Առավոտյան պարտադիր պետք է նախաճաշել, օրն ավելի եռանդուն սկսելու համար: Նախաճաշելը լավ սովորություն է:
4. Չափից ավելի քիչ ուտելը կարող է թերսնում առաջացնել, ինչպես նաև՝ չափից շատ ուտելը կարող է գիրություն և մի շարք այլ առողջական խնդիրներ առաջացնել:
5. Սննդի մեջ չափից ավելի աղ, շաքար և յուղեր օգտագործելը վնաս է առողջությանը: Այն սննդատեսակները, որոնք չափից ավելի աղի են, յուղոտ և քաղցր, համարվում են անառողջ սնունդ:



The Nation



Տնային հանձնարարություն

Ինչպիսի՞ սնունդ ես ուտում ամեն օր: Ընտրիր մի օր և աղյուսակում լրացրու այդ օրվա կերած բոլոր սննդատեսակները:

Սննդամթերքներ	նախաճաշ	ճաշ	Ետճաշիկ	ընթրիք
Հաց, շիլա, մակարոն, բրինձ, կարտոֆիլ				
Բանջարեղեն				
Մրգեր				
Միս, հավ, ձուկ, ձու, հատիկ լոբի, ընկուզեղեն				
Կաթ, թթվասեր, կաթնաշոռ, մածուն, յոգուրտ, պանիր և այլն				
Քաղցրեղեն, յուղեր, կոկա-կոլա, շոկոլադ, կրեմով տորթ, չիպս, շոկոլադ և այլն				

ԴԱՍ 3 - ԸՆՏՐԵԼ ԱՌՈՂՋ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՍՆՈՒՆԴ



1. Հայրիկը գնումներ է արել և բերել տուն: Բայց մայրիկը տանը չէ: Կարո՞ղ եք առանց մայրիկի օգնության գնումները տեղավորել:
Զույգերով աշխատելով՝ որոշեք, թե մթերքներից որը որտեղ կտեղավորեք, սառնարանում, թե պահարանում: Մեկնաբանե՛ք:



- Պատահե՞լ է, որ ուտելիքից սրտխառնոց, փորացավ ունենաք: Ի՞նչն է եղել պատճառը:
- Ի՞նչ եք կարծում, ե՞րբ, ո՞ր դեպքերում կարող է սնունդը վտանգավոր լինել:
- Որո՞նք են այդ վտանգները:

2. Ծանոթացեք իրավիճակներին և որոշեք, թե որ կանոնն են խախտել հերոսները:

1. Տիգրանն ու Լուսինեն բակում գնդակ էին խաղում: Մաքուր օդից քաղց զգացին, ախորժակները բացվեց, բայց տուն գնալ չէին ուզում, խաղալուց չէին հագեցել: Մեկ էլ Տիգրանի աչքն ընկավ բակի ծիրանենուն. Ո՞վ թթվաշ ցոգոլ չի սիրում: Վազեց, մագլցեց ծառն ու գրպանները լիքը ցոգոլ լցրեց, Լուսինեն էլ ծառի տակ թափվածները հավաքեց: Ի՞նչ համով էին...
2. Գրիգորն ու Անին ուրախացել էին. դպրոցի հարևանությամբ կրպակ էր բացվել: Ինչ ասես, որ կրպակում չէին վաճառում, է՛լ չիպսեր, է՛լ կոնֆետ ու պաղպաղակ, է՛լ կոլա ու ադի ձողիկներ... Հիմա ամեն օր դասամիջոցներին իրենց սիրած բաներից կուտեին:
3. Բակի երեխաներով գնացել էին զբոսանքի: Մաքուր օդում երկար զբոսանելուց սովածացան: Ճանապարհի եզրին շատ սունկ և հատապտուղ էր աճում: Տիգրանը բուռը լցրեց հատապտուղներով և առաջարկեց մյուսներին: Բոլորը փորձեցին: Մի քիչ էլ սունկ հավաքեցին ու բերեցին տուն: Երբ սունկը մեծերը տեսան, ասացին, որ դրանք ուտելի չեն: Լավ էր, որ չէին կերել: Բայց երեկոյան բոլորի փորը ցավում էր, հավանաբար հատապտուղն էլ ուտելի չէր:
4. Կոկոն ու Քուչոն նեղացել էին, որ երեխաներն իրենց հետ չէին տարել զբոսանքի և որոշեցին երկուսով միասին գնալ զբոսանելու: Մի քիչ զբոսանելուց հետո երկուսն էլ սովածացան: Տեղանքն ուսումնասիրելուց հետո Կոկոն մի կտոր բորբոսնած չոր հաց գտավ, իսկ Քուչոն էլ՝ մի պահածոյի ուռած տուփ: Մի կերպ Կոկոյի կտուցն ու Քուչոյի ճանկերը գործի դնելով՝ պահածոն բացեցին... Երկուսն էլ մի երկու օր բակում չէին երևում:

Անվտանգության կանոններ

- Գետին ընկած սննդամթերք մի՛ վերցրեք, մի՛ կերեք:
- Մրգերն ու բանջարեղենը, առանց լվանալու, մի՛ կերեք:
- Բորբոսնած մթերք մի՛ կերեք:
- Շատ քաղցր, աղի և յուղալի ուտելիքը մի՛ չարաշահեք, ամեն օր մի՛ կերեք:
- Առանց մեծերին հարցնելու՝ անծանոթ սննդամթերք մի՛ կերեք:
- Հնացած, արևին երկար մնացած սննդամթերք մի՛ կերեք:
- Ժամկետն անցած պահածոներ և այլ սննդամթերք մի՛ կերեք:

- Եթե պահածոյի տուփն ուռած է, պահածոն մի՛ կերեք:
- Կեղտոտ ձեռքերով սննդամթերք մի՛ վերցրեք, մի՛ կերեք:
- Ամեն պատահական պտուղ, բույս բերանը մի՛ դրեք:



Պատասխանեք հարցերին

- Եթե դրսում եք և քաղցած եք, սովորաբար ի՞նչ եք ուտում:
- Թվարկածից որո՞նք են, որ չպիտի չարաշահենք, որո՞նք են, որ օգտակար են և կարելի է ամեն օր ուտել:
- Եթե դրսում պետք է սնվեք, բայց լվացվելու հնարավորություն չկա, ի՞նչ կանեք:
- Ինչու՞ է ցանկալի գրպանում կամ պայուսակում միշտ թաց անձեռոցիկ ունենալ:



3. Եկեք փորձ կատարենք:

ա) Վերցրե՛ք տարբեր սննդամթերքներ փոքր քանակությամբ և տեղադրեք մեկանգամյա բաժակների մեջ՝ առանձին-առանձին (պանիր, թթվասեր, հաց, կանաչի, լավաշ, կարագ, միս, կաթ, խնձոր (ամբողջական և կտրտված):

բ) Ծածկեք պոլիէթիլենից թաղանթով և դրեք պատուհանի գոգին կամ պահարանի մեջ:

գ) Ամեն օր հետևեք կատարվող փոփոխություններին և լրացրեք աղյուսակում, թե որի հետ ինչ է կատարվել:

դ) Աղյուսակ կազմեք՝ հետևելով այս օրինակին, օրերի քանակն ու մթերքների ընտրությունը որոշեք ուսուցչի հետ:

Մթերքի անունը	Օր 1	Օր 2	Օր 3	Օր 4	Օր 5
կաթ					
կանաչի					
հաց					
պանիր					

լավաշ					
այլ					



4. ՆԱՐԵԿԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ

Պատկերացրե՛ք՝ այսօր Նարեկի ծննդյան տարեդարձն է, և նա բալկում ընկերների համար հյուրասիրություն է պատրաստել՝ սեղան է գցել:

Դուք կարող եք գնալ «խանութ», վերադարձնել Նարեկի գնած անառողջ սնունդը՝ դրանք փոխարինելով առողջ սննդամթերքով: Փորձե՛ք, իրար հետ քննարկելով, ծննդյան սեղանը դարձնել օգտակար:

Նարեկի գնած մթերքները

- Ի՞նչն ինչով փոխարինեցիք: Ինչու՞:
- Որոնք էին ամենաանառողջ ուտելիքները և որոնք՝ ամենավնասակարը:

ԴԱՍ 4 – ՎՏԱՆԳՆԵՐԸ ՄԵՐ ՇՐՋԱՊԱՏՈՒՄ



1.

- Ինչպե՞ս եք ձեզ զգում տանը:
- Ինչպե՞ս եք ձեզ զգում դպրոցում:
- Ինչպե՞ս եք ձեզ զգում դրսում:
- Իսկ որտե՞ղ եք ձեզ ավելի ապահով զգում: Ինչո՞ւ:
- Ու՞մ կողքին եք ավելի ապահով զգում:
- Իսկ ե՞րբ եք ձեզ անապահով զգում:
- Ի՞նչը կարող է խախտել ձեր ապահովությունը:



2.

- Ինչպե՞ս կարող եք բացատրել ապահով բառը:
- Իսկ ինչպե՞ս կբացատրեք վտանգ բառը:

Ապահովություն

Վտանգ

- Այս երկու բառերի շուրջը գրեք բառեր, որոնք որևէ կերպ կապվում են «**ապահովություն**» և «**վտանգ**» բառերի հետ: Օրինակ՝

- ✓ մարդիկ, որոնց հետ ձեզ ապահով եք զգում, օրինակ՝ մայրիկ,
- ✓ մարդիկ, որոնցից վախենում եք կամ վտանգ եք զգում, օրինակ՝ ոչ սթափ վարորդ,
- ✓ կենդանիներ, օրինակ՝ հաչացող շուն,
- ✓ երևույթներ, օրինակ՝ ամպրոպ, հրդեհ,
- ✓ և այլն:



3. Միասին աշխատելով՝ քարտերը տարբերակեք. որտե՞ղ կարող են պատահել այս վտանգները:

«Վտանգներ» քարտեր

Էլեկտրասարքերի, լարերի, վարդակների հետ խաղալը	Առանց ուսուցչի հսկողության սպորտային գույքից օգտվելը
Անձանոթ սրվակներից կամ տարաններից որևէ բան խմելը	Սուր, ծակող առարկաներ, գործիքներ վերցնելը
Ջրի ծորակների հետ խաղալը	Աստիճանների բազրիքով սահելը
Պատշգամբից, բազրիքից և պատուհանից դուրս կախվելը	Անձանոթից որևէ բան վերցնելը և անձանոթի հետ տեղ գնալը
Դասամիջոցին միմյանց հրմշտելը	Ծառը կամ տան տանիքը բարձրանալը
Անձանոթի առաջ դուռը բացելը, երբ մեծերը տանը չեն	Համաճարակի ժամանակ մարդաշատ վայրում առանց դիմակի լինելը
Տնային կենդանիների հետ խաղալուց հետո չլվացվելը	Ճամփեզրին կամ փողոցում խաղալը
Վերելակից առանց մեծահասակի օգտվելը	Առանց մեծահասակների անտառ գնալը
Դեղերի հետ խաղալը, առանց մեծերի իմացության խմելը	Անձանոթի հետ համացանցում շփվելը, տեղեկություններ փոխանակելը
Ավտոմեքենաների երթևեկելի մասում	Գետը ոչ կամրջով անցնելը
Սառցալույանների տակով քայլելը	Կենդանիներին գազազեցնելը
Առանց սաղավարտի կամ պաշտպանիչ արմնկակալների ու ծնկակալների հեծանիվ կամ անվաճառուկներ քշելը	Գազօջախի պտուտակների հետ խաղալը, գազօջախը վառելը կամ եփվող կաթսային մոտենալը



4. Նայե՛ք նկարները





- Նկարագրեք, թե ինչ հետևանք կարող է լինել յուրաքանչյուր նկարի իրավիճակում:
- Իսկ ո՞րն է երեխաների՝ նման իրավիճակներում հայտնվելու պատճառը:
- Ի՞նչ սխալներ և բացթողումներ կարող եք ասել, որ անում են նկարների երեխաները:
- Իսկ այն կանոնների մասին, որոնք խախտել են երեխաները, ի՞նչ եք կարծում, մեծահասակները նրանց զգուշացրե՞լ են:
- Իսկ ինչո՞ւ են հաճախ երեխաներն անտեսում դրանք:



5. Նայե՛ք նկարներին



- Որտե՛ղ կարող են պատահել այս իրավիճակները:
- Ի՞նչ վարքի կանոններ են, որ չեն կատարում երեխաները:
- Ովքե՛ր կարող են դրանից վնասվել:



6. Կարդացեք պատահարների մասին փոքրիկ տեքստերը և փորձեք ամեն մեկի համար հնարավորինս շատ «Չէր պատահի, եթե... » բառերով սկսվող նախադասություններ կազմել, որոնք կօգնեին խուսափել վտանգից:

- ❖ Արմենը խաղում էր հայրիկի ձկնորսական պարագաներով: Հանկարծ կարթը մատը խրվեց: Ստիպված էին Արմենին հիվանդանոց տանել, որպեսզի կարթը մատից հանեն:

_ Չէր պատահի, եթե...

- ❖ Մանիկը եղբոր հետ տնով մեկ բռնոցի էր խաղում: Վազելիս դիպավ տաք թեյնիկին: Թեյնիկը շրջվեց, և եռման ջուրը թափվեց Մանիկի վրա:

_ Չէր պատահի, եթե...

- ❖ Միքայելը տաքացուցիչն անջատելիս քաշել էր էլեկտրալարից: Լարը պոկվել էր, և հոսանքն այրել էր Միքայելի ձեռքը:

_ Չէր պատահի, եթե...

- ❖ Շուշանիկը տնից դուրս գալիս մոռացել էր արդուկն անջատել: Երբ տուն վերադարձավ, հրշեջները փորձում էին հանգցնել իրենց այրվող տունը:

_ Չէր պատահի, եթե...

- ❖ Գայանեն ցանկացել էր մայրիկին օգնել, և մատը մնացել էր մսաղացի մեջ ու վնասվել:

_ Չէր պատահի, եթե...

- ❖ Նարինեն խաղում էր գազօջախի բռնակներով: Չէր նկատել, որ դրանցից մեկը բացվել է: Թունավորվել էր և երկար ժամանակ անցկացրել հիվանդանոցում:

_ Չէր պատահի, եթե...

- ❖ Արան լուցկով խաղում էր: Բոցից սեղանի թղթերը բռնկվեցին: Արան վախեցած կրակը ձեռքերով հանգրեց և այրվածքներ ստացավ:

_ Չէր պատահի, եթե...

- ❖ Արմենը, պատշգամբից կախված, ընկերոջ հետ խոսում էր: Հավասարակշռությունը կորցրեց և դուրս ընկավ: Բարեբախտաբար առաջին հարկում էին ապրում, և միայն ուսը վնասեց:

_ Չէր պատահի, եթե...

- ❖ Նարեկը դպրոցի աստիճանների բազրիքով ցած էր սահում, վայր ընկավ և ոտքը կոտրեց:

_ Չէր պատահի, եթե...

- ❖ Մարինեն խոհանոցի սեղանին տատիկի գունավոր հաբերը տեսավ, կարծեց՝ կոնֆետներ են ու մի քանիսը կերավ: Մի կերպ թունավորումից փրկեցին:

_ Չէր պատահի, եթե...

- ❖ Կարենը մենակ վերելակ էր նստել: Հանկարծ վերելակը փչացավ: Կարենը երկար մնաց մուգ վերելակում և վախեցավ:

_ Չէր պատահի, եթե...

- ❖ Երեք տարեկան Արեգը լողարանի հատակին դրված շշից խմել էր: Պարզվում է՝ շշի մեջ լվացող հեղուկ էր լցված: Տղային հազիվ փրկեցին՝ հիվանդանոց հասցնելով:

_ Չէր պատահի, եթե...

- ❖ Արամը դպրոցում բուֆետի հերթում հրմշտում էր, որ առաջ անցնի, երեխաների հետ կովի բռնվեց, իրար հրեցին ու լուսամուտը կոտրեցին: Կոտրված ապակիները վնասեցին Լիլիթի ձեռքը, շտապ պետք էր բժիշկ կանչել:

_ Չէր պատահի, եթե...



Տնային հանձնարարություն

Նկարագրի՛ր որևէ վտանգավոր իրավիճակ դպրոցում և թե ինչպես կարելի է խուսափել նման իրավիճակում հայտնվելուց:

ԴԱՍ 5 – ՎՏԱՆԳՆԵՐԸ ՄԵՐ ՇՐՋԱՊԱՏՈՒՄ



- Ի՞նչ վտանգների մասին խոսեցինք:
- Ինչ վնասվածքներ կարող են պատահել վտանգների ժամանակ:



1. Ֆիլմի դիտում

<https://www.youtube.com/watch?v=--6tOQgqIjA>

- Ինչի՞ հետևանքով էին առաջացել վնասվածքները:
- Ի՞նչ պետք է իմանալ և անել վնասվածքներ չստանալու համար:



2. Նայե՛ք նկարները, գտե՛ք և մեկնաբանեք սխալները:


1-ին խումբ



2-րդ խումբ



3-րդ խումբ



- Ինչու՞ չի կարելի փողոցում ֆուտբոլ խաղալ:
- Իսկ որտե՞ղ պետք է խաղալ:
- Որտե՞ղ պետք է հեծանիվ վարել:
- Ինչու՞ չի կարելի առանց սաղավարտի և ծնկակալների հեծանիվ և անվաճճուշկներ քշել:
- Ինչպե՞ս պետք է անցնել փողոցը:
- Ինչու՞ չի կարելի փողոցն անցնելիս խոսել հեռախոսով:
- Ինչի՞ համար են լուսակիրները:
- Փողոցն անցնելիս հետևու՞մ ես լուսակրի գույներին:
- Իսկ ճանաչու՞մ ես գույները, գիտե՞ս՝ որն ինչի համար է:

3. Խաղ՝ «Լուսակրի գույները»



4. «Անվտանգությունը փողոցում»

- **Գտի՛ր նախադասության մասերը և լրացրու:**
- Ինչպե՞ս գտաք նախադասությունների շարունակությունները:
- Արդյոք այսքանն իմանալը բավարա՞ր է, որ առանց մեծահասակների ուղեկցության՝ փողոց դուրս գաք:
- Իսկ եթե մենակ եք փողոցում, էլ ի՞նչ վտանգներ կարող են պատահել:



5. Ֆիլմի դիտում

<https://www.youtube.com/watch?v=hF7OXonrYvY>



6. Քննարկենք միասին

- Ինչո՞ւ չի կարելի անծանոթի հետ մեքենա նստել:
- Ի՞նչ կարող է պատահել, եթե ընդունեք անծանոթ մարդու հյուրասիրությունը:
- Վերհիշելով ֆիլմում տեսածը՝ փորձեք կազմել հնարավորինս շատ «Չի կարելի» բառով սկսվող նախադասություններ, որոնց իմացությունը կօգնի խուսափել վտանգներից:



7.

- Հաճա՞խ եք լինում բնության գրկում:
- Մենա՞կ: Իսկ ու՞մ հետ:
- Ի՞նչ վտանգներ կարող են պատահել:
- Ձեր կամ ձեր ընկերոջ հետ պատահե՞լ է արդյոք որևէ վտանգավոր դեպք:
- Ի՞նչ եք արել, ո՞վ է օգնել:

8. Եկեք տեսնենք, թե ի՞նչ վտանգներ կարող են պատահել մեզ հետ բնության գրկում: Կարո՞ղ եք կռահել, թե անվտանգության ինչ կանոնների մասին են հուշում նկարները:



«Անվտանգությունը բնության գրկում»



Գտե՛ք յուրաքանչյուր նկարին համապատասխան կանոնը:

- Մի՛ խաղա այնպիսի տեղերում, որտեղից հնարավոր է ջուրն ընկնել:
- Շան հանդիպելիս երբեք ցույց մի տուր, որ վախենում ես կամ հուզվում, մի՛ փախիր:
- Չի կարելի առանց գլխարկի երկար մնալ արևի ուղիղ ճառագայթների տակ:
- Անտառում մենակ մի շրջիր, վտանգավոր է, կենդանիների կարող ես հանդիպել:
- Քեզանից հետո հանգցրու կրակը, որ հրդեհ չլինի:
- Կայծակի ժամանակ մի կանգնեք մենակյաց ծառերի, մետաղական սյուների, կամ սարքերի մոտ, արագ մտեք որևէ շինություն:

Հիշի՛ր

- Եթե հայտնվել ես վտանգի մեջ, անպայման, դիմիր մեծահասակներին:
- Զանգահարիր հետևյալ հեռախոսահամարներով.

911	—	Փրկարար ծառայություն
1-01	—	Հրշեջ ծառայություն
1-02	—	Ոստիկանություն
1-03	—	Շտապ օգնություն
1-04	—	Գազի վթարային ծառայություն

9. Հիշեք նախորդ դասի՝ «Չէր պատահի, եթե...» աշխատանքը: Կրկին կարդացեք յուրաքանչյուր պատմությունը և արագ կռահեք, թե որ հեռախոսահամարով պետք է զանգահարեք:



Տնային հանձնարարություն

Փորձեք գտնել, հիշել, հարցուփորձ անել և գրեք մի քանի կանոն, որ պետք է հիշեք և պահպանեք որպես ուղևոր, երբ երթևեկում եք մեքենայով, ավտոբուսով, մետրոյով:



ԴԱՍ 6 – ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐ. ԵՐԿՐԱՇԱՐԺ



1.

- Ի՞նչ գիտեք երկրաշարժի մասին:
- Ի՞նչ է լինում երկրաշարժի ժամանակ:

2.



Երկրաշարժի ժամանակ գետինը սկսում է ցնցվել, կարծես հողը փախչում է ոտքի տակից, առարկաները շարժվում են, հնարավոր է՝ կահույքը շուտ գա, պատերին ճաքեր առաջանան գետինը կարող է ճեղքվել: Եթե ցնցումներն ուժեղ են, կարող են նույնիսկ շենքեր քանդել:

Այն վայրերում, որտեղ երկրաշարժերն ավելի հաճախ են լինում, շենքերը կառուցվում են հատուկ ձևով, որ դիմանան ցնցումներին: Սակայն շատ կարևոր է իմանալ, թե ինչպես պետք է պաշտպանվել երկրաշարժի ժամանակ: Դա, իհարկե, կախված է այն հանգամանքից, թե մարդը որտեղ է գտնվում, երբ երկրաշարժը սկսվում է: Եթե շենքի ներսում եք և չեք հասցնի արագ դուրս գալ, ճիշտ կլինի թաքնվել որևէ ամուր կահույքի տակ, որպեսզի ընկնող իրերը ձեզ չվնասեն:

Իսկ եթե դրսում եք, պիտի աշխատեք գնալ բաց տեղ՝ կառույցներից, ծառերից և հոսանքալարերից հեռու:



3. «Գիտե՞ս արդյոք»

- Տեսնենք՝ ի՞նչ պետք է իմանալ երկրաշարժից պաշտպանվելու համար:







4. Համապատասխանեցրե՛ք աջ և ձախ սյունակները, կարդացեք ստացված կանոնները և մտապահեք:

1. Նախապես ծնողների հետ	ա) պատերից և պատուհաններից:
2. Հեռու մնա չամրակցված	բ) խուճապի մի մատնվիր:
3. Ոչ մի դեպքում չենք	գ) դռան բացվածքում:
4. Մտիր	դ) շենքերից:
5. Անմիջապես դուրս արի շենքերի	ե) ստորին հարկերից:
6. Հեռու մնա	զ) սեղանի տակ:
7. Կանգնիր հիմնական պատերի	է) մի մտիր:
8. Երկրաշարժի ժամանակ	ը) կահույքից:
9. Հեռու մնա արտաքին	թ) հանդիպման վայր որոշեք:
10. Շենքում մնալու դեպքում կանգ նիր ներքին կրող սյուների մոտ և	ժ) հիմնական պատերով կազմված անկյուններում:

5. «Աղետի կապոց»



Բինտ



բամբակ



յոդ



լապտեր




մոմ



լուցկի



անձնական փաստաթղթեր
կամ պատճենները



տաք ծածկոց



առաջին
անհրաժեշտության
դեղորայք

6. «Ում դիմել»

Հիշի՛ր այս հեռախոսահամարները, որովհետև վտանգներն ամենուր են:

911	—	Փրկարար ծառայություն
1-04	—	Հրշեջ ծառայություն
1-05	—	Ոստիկանություն
1-06	—	Շտապ օգնություն
1-04	—	Գազի վթարային ծառայություն



5. Ուսուցչի օգնությամբ պարզե՛ք՝ որոնք են դպրոցի ապահով տեղերը, ծանոթացե՛ք տարհանման պլանին:



Տնային հանձնարարություն

- Տանը ծնողների օգնությամբ պարզե՛ք՝ որոնք են ձեր տան ապահով տեղերը, ներսի կրող սյուները կամ հիմնական պատերը:
- Ծնողների հետ հանդիպման վայր որոշե՛ք հենց այսօր:

ԴԱՍ 7 – ՎՆԱՍԱԿԱՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



1.

- Ի՞նչ են սովորությունները:
- Ինչպիսի՞ն կարող են լինել սովորությունները:
- Իսկ դուք ի՞նչ սովորություններ ունենք:

2.

Բոլոր մարդիկ ունեն սովորություններ: Սովորությունները մարդկանց կրկնվող արարքներն են, որոնք մարդը հաճախ անում է ինքնաբերաբար, որովհետև սովոր է նման իրավիճակներում այդպես վարվել: Օրինակ՝ միշտ աղբը աղբարկղն է նետում կամ ամեն առավոտ նախաճաշում է: Սրանք լավ սովորություններ են: Մենք ունենք և՛ լավ, և՛ վատ սովորություններ: Լավ սովորությունները նրանք են, որոնք օգնում են ավելի հեշտ, ճիշտ, առողջ և օգտակար ապրել, իսկ վատերը, որոնք մեզ կամ ուրիշներին վնասում են: Եկեք տարբերենք լավ և վատ սովորությունները: Մշակենք մեր մեջ լավ սովորություններ: Լավ սովորություններ ունենալը օգուտ է բերում թե՛ մեզ, թե՛ շրջապատին:



3. Ո՞րն է լավ, որը վատ սովորություն:

- Մտածե՛ք, քննարկեք և գրե՛ք համապատասխան սյունակում

Լավ սովորություններ	Վատ սովորություններ

1. Միշտ ծամոն ծամելը
2. Ստելը
3. Հաճախ լվացվելը
4. Ատամները մաքրելը
5. Իրերը ուր պատահի շաղ տալը

6. Եղունգները, գրիչը, մատիտը կրծելը
7. Իրերը իրենց տեղը դնելը
8. Մարզանք անելը
9. Համացանցում երկար գտնվելը
10. Ուշանալը
11. Ծխելը
12. Ճշտախոս լինելը
13. Ծուլանալը
14. Բկլիկությունը
15. Կոկիկությունը
16. Չնախաճաշելը
17. Դուռն առանց հարցնելու՝ ով է, բացելը
18. Խաղալիքներն ու դասագրքերը հավաքելը
19. Ծնողներին օգնելը
20. Կռվելը, բամբասելը
21. Օրվա ռեժիմը պահպանելը
22. Դասերը ժամանակին սովորելը
23. Բղավելը
24. Հաճախ մաքուր օդում գտնվելը
25. Աղբը ուր պատահի թափելը
26. Երթևեկության կանոններին չհետևելը

- Մեկնաբանե՛ք, ինչու՞ ենք վատ սովորություններին հաճախ նաև վնասակար ասում: Որն ի՞նչ վնաս կարող է տալ:
- Կարո՞ղ եք լրացնել այս սյունակները, դուք ի՞նչ լավ կամ վնասակար սովորություն գիտեք, որ էստեղ գրված չէր:
- Իսկ ի՞նչ վնասակար սովորություններ ունեն մեծահասակները:



4.

- Իսկ կարո՞ղ ենք այս սովորություններն անվանել առողջ և անառողջ սովորություններ: Ինչպե՞ս կդասակարգեք:

Առողջ	Անառողջ	Չգիտեմ

5. Նայեք նկարներին և պատմեք, թե ինչ եք տեսնում:



- Նկարների հերոսներից ո՞ր մեկի հետ կուզեիք ընկերություն անել: Ինչու՞:
- Ի՞նչ վնաս կարող է տալ նման պահվածքը: Ու՞մ կվնասի առաջին հերթին:

6. Մշակենք առողջ սովորություններ

- Ինչպե՞ս կարող ենք ազատվել վատ սովորություններից:
- Ինչպե՞ս կարող ենք վատ սովորությունները վերածել լավ սովորությունների:

Առողջ սնվիր և շատ ջուր խմիր 	Հաճախ եղիր մաքուր օդում և օդափոխիր սենյակդ 	Սահմանափակիր հեռախոսից ու համակարգչից օգտվելը 
Օրվա ընթացքում առնվազն մեկ ժամ մարզվիր կամ խաղա 	Օրը երկու անգամ լվա ատամներդ 	Ժամանակին և բավարար քնիր 

Աշխատիր և խաղա՝ պահպանելով անվտանգության կանոնները 	Ձեռքերդ միշտ մաքուր պահիր 	Եղիր բարի քո և մյուսների հանդեպ 
Հազվադեպ կեր քաղցր և անառողջ սնունդ 	Ամեն օր լողանք ընդունիր 	Հանգստանալու ժամանակ գտիր 



Տնային հանձնարարություն

Մտածի՛ր և լրացրու:

Իմ լավ սովորություններն են _____:

Իմ վատ սովորություններն են _____:

Ինձ գովում են _____

_____ համար:

Ինձ հանդիմանում են _____

_____ համար:

Կուզեի ունենանալ _____ սովորությունը:

ԴԱՍ 8 - ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ



1. Համեմատե՛ք նկարների զույգերը:

- Ինչո՞վ են տարբերվում:
- Ի՞նչն է փոփոխությունների պատճառը:

1-ին խումբ



2-րդ խումբ



3-րդ խումբ



4-րդ խումբ




5-րդ խումբ



6-րդ խումբ



7-րդ խումբ



- Ձեզ դու՛ր են գալիս աղտոտված տարածքները: Ինչու՛:
- Բացի այն, որ գեղեցիկ չեն, ուրիշ ի՞նչ բացասական երևույթներ եք նկատում:
- Կարո՞ղ եք ասել, թե թափված աղբի, գործարանների արտադրած ծխի և գետը լցրած թափոնների, մեքենաների առաջացրած ծխի և մրի հետևանքով ինչեր են աղտոտվում:
- Մենք շնչու՛մ ենք այդ օդը, ուտու՛մ ենք այդ հողի վրա աճած պտուղներն ու բանջարեղենը, խմու՛մ ենք ջուրը, ուտու՛մ ենք այդ աղտոտված ջրերում ապրող ձկներ և ծովամթերք:
- Իսկ ի՞նչը կարող է մաքրել օդը:
- Սակայն մարդը նաև մեծ քանակությամբ ծառեր է հատում, որպեսզի թուղթ և կահույք պատրաստի:

- Ի՞նչ եք կարծում, գետերում ապրող կենդանիներն ի՞նչ վիճակում են հայտնվել այդ աղբի պատճառով: Այս թափոններն ինչպե՞ս են անդրադառնում այդ կենդանիների առողջությանը:
- Իսկ մե՞ր:
- Ովքե՞ր են մեղավոր: Արդյոք մենք չե՞նք կարող կանխել կամ չավելացնել այդ աղբի քանակը:
- Կարո՞ղ ենք ասել, որ մարդկանց թափած աղբը և բնությանը տված վնասը վերադառնում է հենց մարդուն:
- Ի՞նչ է պետք անել այդ ուղղությամբ:



2. Խմբերում մտածեք այս հարցերի շուրջ և առաջարկներ արեք.

- Ի՞նչ կարելի է անել, որ այդքան աղբ չթափվի:
- Կարո՞ղ ենք քիչ օգտագործել այդ տոպրակները, որպեսզի ավելի քիչ աղբ թափենք:
- Կարո՞ղ ենք կտորե տոպրակ օգտագործել և դրանով գնալ գնումների:
- Արդյոք պետք չէ խնայել բոլոր բարիքները:
- Մի՞շտ ենք օգտագործում այնքան, որքան անհրաժեշտ է, թե՞ երբեմն ավելին ենք օգտագործում ու վատնում:
- Ի՞նչ կարող ենք անել, որ խնայենք և քիչ վատնենք երկրի բարիքները:



3. Նայեք նկարին: Տարբեր երկրներում աղբը տեսակավորում են: Ամեն տեսակի աղբի համար առանձին աղբաման կա: Սա ավելի է հեշտացնում աղբահանության, աղբի մշակման և շրջապատին ավելի քիչ վնաս հասցնելու և խնայողության գործողությունները: Փորձեք դուք էլ նույնն անել: Ի՞նչը որ աղբամանը կզգեք:



Քարտեր





- Ինչպիսի՞ երկրի վրա ենք ուզում ապրել:



- Ուրեմն պետք է սիրենք ու փայփայենք այն:



Տնային հանձնարարություն

Պատրաստվում ենք ցուցահանդեսի: Նկարի՛ր երկու նկար: Մեկը՝ աղտոտված բնության տեսարան, մյուսը՝ գեղեցիկ բնապատկեր, որտեղ կուզեիր գտնվել:

ԴԱՍ 9 – ՊԱՇՏՊԱՆԵՆՔ ՄԵՋ ՎԱՐԱԿՆԵՐԻՑ



1.

- Նկարագրե՛ք առողջ մարդու, ինչպե՛ս կրնու՞թագրեք:
- Նկարագրե՛ք հիվանդ մարդու, ինչպե՛ս կրնու՞թագրեք:

2.

- Ե՛րբ եք վերջին անգամ հիվանդացել:
- Ին՛չ հիվանդություններով եք ավելի հաճախ հիվանդանում:
- Իսկ գիտե՛ք ինչ մանկական հիվանդություններ եք տարել, երբ փոքր էիք:

3. Ինչպե՛ս եք իմանում, որ հիվանդ եք:

Ին՛չ եք զգում, երբ հիվանդանում եք:

Նայեք նկարները և նկարագրեք՝ ինչ են զգում նկարի կերպարները:





- Ինչպե՞ս են մեկնաբանել մեծերը, երբ դուք հիվանդացել եք:
 - Տաք չեք հագնվել...
 - Գուլպա չեք հագել...
 - Ձյունների մեջ շատ թավալ եք եկել...
 - Ինչ-որ մեկից վարակվել եք...



4. Ի՞նչ գիտեք հիվանդություններից պաշտպանվելու մասին: Փորձե՛ք, ընկերների հետ միասին մի քանի եղանակ ասել, թե ինչ պետք է անել, որ չհիվանդանաք:



5. Ֆիլմի դիտում:

Եկեք դիտենք «Հիվանդություններն ու առաջացման պատճառները» ֆիլմը:

- Ի՞նչ նոր բան սովորեցինք ֆիլմից:
- Արդյոք ձեր գրած կանոնները ճի՞շտ էին, թե՞ շտկումների և լրացումների կարիք կար:

- Եկեք հերթով նշենք, թե ինչ կանոններ պետք է պահենք, որպեսզի չհիվանդանանք:

- Հագնվե՛ք եղանակին համապատասխան, եթե ցուրտ է, տաք հագնվեք, եթե տաք է, թեթև: Չի կարելի անկախ եղանակից միշտ տաք հագնվել, որովհետև կարող եք քրտնել և շատ ավելի արագ սառչել: Երբ մրսում եք, ավելի հեշտ եք վարակներն ընդունում:



- Մի՛ շփվեք, հեռու մնացեք հիվանդ, հազացող, փռշտացող մարդկանցից: Կարող եք շատ արագ վարակվել նրանցից:



- Հաճախ լվացվեք և պահպանեք սննդի հիգիենան:



- Եթե համաճարակ է, դիմակ կրեք և պահպանե՛ք հայտարարված կանոնները:



- Առողջ սնվեք, նախաճաշեք և պահպանե՛ք օրվա ռեժիմը:



- Ժամանակին պատվաստվեք:



- Հաճախ օդափոխեք սենյակը և եղե՛ք մաքուր օդում:



- Համաճարակի ժամանակ խուսափե՛ք մարդաշատ վայրերից, մնացե՛ք տանը:



6. Կարդացե՛ք տեքստը և քննարկեք:

Իսկ գիտե՞ք, թե պատվաստումները ձեզ քանի ծանր հիվանդությունից են պաշտպանում: Չէ՞ որ նախկինում շատ երեխաներ են հիվանդացել ու անգամ մահացել մանկական ծանր հիվանդություններից, օրինակ՝ ծաղիկից, թոքախտից, կարմրուկից, պոլիոմիելիտից, կապույտ հազից, դիֆթերիայից և էլի շատ ու շատ հիվանդություններից: Իսկ հիմա բժշկությունը կարողացել է հաղթահարել դրանցից մի քանիսը, նույնիսկ պետք չէ արդեն պատվաստվել, որովհետև այլևս երկրագնդի վրա չի մնացել այդ հիվանդությամբ գոնե մեկ հիվանդ, օրինակ՝ ծաղիկը: Իսկ օրինակ՝ կարմրուկը, որով հավանաբար հիվանդացել են ձեր տատիկ-պապիկները, երբեմն-երբեմն գլուխ է բարձրացնում և սպառնում համավարակ դառնալ, որովհետև որոշ մարդիկ հրաժարվում են պատվաստումներից, իսկ դա ևս վարակի տարածման պատճառ կարող է դառնալ: Բայց կան հիվանդություններ, որոնք դեռ սպառնում են մեզ, այդպիսի հիվանդություն է թագավարակ կոչվող հարուցիչի առաջացրած հիվանդությունը՝ կովիդը: Այս վարակը արդեն մեկ տարուց ավելի է՝ փոխել է աշխարհը և մեր ապրելակերպը: Տեսնու՞մ եք թե ինչ կարևոր է կանոնները պահպանելն ու հիվանդությունները կանխարգելելը:



7. Հիմա եկեք մտածեք, թե ինչ պետք է անեք, եթե արդեն հիվանդացել եք:
Ի՞նչ եք անում սովորաբար, ինչպես են խնամում ձեզ տանը: Ի՞նչ են խորհուրդ տալիս անել, ինչ ուտել, ինչ խմել և այլն:
Միասին խմբով քննարկեք և ներկայացրեք ձեր խմբի խորհուրդները մյուսներին:



8. Հիմա տեսնենք, թե ինչ խորհուրդ են տալիս բժիշկները:



- Անպայման դիմեք բժշկի, հետևեք բժշկի խորհուրդներին և խմեք բժշկի նշանակած դեղերը:

- Եթե բարձր ջերմություն ունեք, ավելի լավ է պառկեք անկողնում: Թեյ, ջուր շատ խմեք, հեղուկը կօգնի օրգանիզմից հեռացնելու վնասակար նյութերը և կիջեցնի ջերմությունը:





- Եթե ջերմություն չունեք, աշխատեք քիչ շփվել ուրիշների հետ կամ պահպանեք շփման կանոնները:

- Հազալիս, փռշտալիս բերանը փակեք թաշկինակով, ցանկալի է՝ անձեռոցիկով և անմիջապես նետեք աղբամանը, հետո լվացվեք, որ ձեռքերով չտարածեք վարակը:



- Երբեք բերանը մի ծածկեք ձեռքով, եթե թաշկինակ կամ անձեռոցիկ չունեք, դա վարակը ձեռքով տարածելու ամենահեշտ ձևն է:

- Բերանը պետք է ծածկել արմունկով:





- Դիմակ կրեք, որպեսզի պաշտպանեք ձեր հարազատներին և ընկերներին:



2-րդ ԴԱՍԱՐԱՆ
ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ
ԹԵՄԱ 3 – ԵՍ ՄԵՆԱԿ ՉԵՄ

Աշակերտի նյութերի փաթեթ

© **Լուսինե Ալեքսանյան, Հասմիկ Անտոնյան**

ԹԵՄԱ – 3 ԵՍ ՄԵՆԱԿ ԶԵՄ

ԴԱՍ 1 – ԵՍ ԵՎ ԻՄ ԸՆՏԱՆԻՔԸ

1.

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է ընտանիքը:
- Ովքե՞ր են սովորաբար ընտանիքի անդամ համարվում:

2. Տարբեր ընտանիքներ



3. Պատկերացրեք, որ սա ձեր տունն է, և լուսամուտներում փակցրեք ձեր ընտանիքի անդամների լուսանկարները:



4. Այս ծառի օրինակով, ձեր թերթիկի վրա փակցրեք ձեր ընտանիքի անդամների, ինչպես նաև տատիկ-պապիկների, մորաքույր-հորաքույրերի, հորեղբայր-քեռիների ընտանիքների և ձեր զարմիկների նկարները՝ ստեղծելով ձեր տոհմաձառը:



ԴԱՍ 2 – ԴԵՐԵՐՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ



1. Ովքե՞ր են հոգում ձեր ընտանիքում այս կարիքները:





 Մնունդ	 Հագուստ	 Խնամք
 Մաքրություն	 Սեր	



- Ի՞նչ կլինի, եթե ընտանիքում ամբողջ գործը միայն մեկն անի:
- Ո՞ր դեպքում գործն ավելի արագ կարվի:
- Ձեր ընտանիքի օրինակով պարտավորությունների բաշխման ի՞նչ նմանություններ և տարբերություններ նկատեցիք:
- Ինչո՞ւ է ճիշտ իրար օգնելը:
- Դուք օգնության կարիք ունեք, բայց ձեր քույրը կամ եղբայրը մերժում են ձեզ: Ի՞նչ կզգաք այդ պահին:



2. Ընտանեկան գործեր

- Ի՞նչ տնային գործեր կթվեք:
- Ովքե՞ր են սովորաբար այդ գործերն անում ընտանիքում:
- Իսկ ձեր ընտանիքում:







3. Պատկերացրեք, որ ձեր ընտանիքում նման փոփոխություններ են կատարվել, ինչպե՞ս կփոխվի ձեր առօրյան և ինչպե՞ս կվերաբաշխվեն ընտանեկան գործերը:

Իրավիճակներ.

- Ընտանիքում քույր կամ եղբայր է ծնվել:
- Քույրիկն ընդունվել է համալսարան:
- Մեծ քույրն ամուսնացել է:
- Ավագ եղբայրը բանակ է գնացել:
- Տատիկն ու պապիկը էլ մեզ հետ չեն ապրում:
- Հայրիկը բացակայում է ընտանիքից:
- Մայրիկն սկսել է աշխատել:
- Հայրիկը փոքրիկ շնիկ է բերել:

Փորձե՛ք յուրաքանչյուր իրավիճակի համար այսպիսի ձևակերպում լրացնել.

Առաջ ես տանը.....:

Հիմա, երբ....., ես.....:

Ամփոփիչ հարց.

- Ձեր ընտանիքում առաջացած փոփոխությունն ուրախացրե՞ց ձեզ, տխրեցրե՞ց, զարմացրե՞ց, ոգևորե՞ց: Ինչու՞:



Տնային հանձնարարություն

Փորձե՛ք պատկերացնել Ձեր ընտանիքի ապագան և երևակայությամբ նկարել ընտանիքներն ապագայում:

ԴԱՍ 3 - ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ




1.

- Ի՞նչպես են ձեր ընտանիքները կազմակերպում իրենց օրը:
- Կա՞ն կանոններ, որոնք գործում են ընտանիքներում:
- Ինչո՞ւ է կարևոր այդ կանոնները պահպանելը:
- Ովքե՞ր են այդ կանոնները սահմանում:
- Կարո՞ղ եք ասել մեկ կանոն, որ ձեր ընտանիքում բոլորը պահպանում են: Ո՞րն է:
- Իսկ կա՞ կանոն, որ դուք հաճախ եք խախտում: Ո՞րն է:

2.


- Ներկայացված կանոններից ո՞րն է գործում ձեր ընտանիքում:



Չիչել և շնորհավորել ծննդյան օրը




Սպասել իր հերթին



Անկողինը հավաքել



Միասին ճաշել




- Ո՞ր կանոնն եք հաճույքով պահպանում, իսկ որը պահպանելն է ամենադժվարը:
- Կա՞ն արդյոք կանոններ, որ այստեղ թվարկված չեն:
- Որո՞նք են դրանք:
- Նկարների վրա նշված կանոններից որո՞նք են հիմնականում բոլոր ընտանիքներում ընդունված:



3. Ո՞վ է որոշողը

Ո՞Վ Է ՈՐՈՇՈՂԸ

 Ե՞րբ և ի՞նչ ուտել	 Հայրիկը, մայրիկը	 Ես	 Միասին
 Ե՞րբ քնել			
 Ինչպե՞ս անցկացնել ժամանցը			
 Ե՞րբ և ի՞նչ խաղալ			
 Տանը կենդանի պահե՞լ, թե ոչ			
 Ե՞րբ և ի՞նչ դիտել հեռուստացույցով			

- Հե՞շտ է միշտ հաշտ լինելը, արդյոք վեճեր կոնֆլիկտներ չե՞ն լինում ընտանիքում:
- Մայրիկը մի՞շտ է գոհ լինում ձեզնից:
- Արդյոք չե՞ք կռվում, վիճում քույրիկի, եղբոր հետ:



4. Ներկայացրեք այս իրավիճակների հաշտ կարգավորման ձեր տարբերակը:

Երկու քույր վիճում են խաղալիքի համար: 	Մայրիկը զայրացել և արգելել է տղային նայել իր սիրած մուլտֆիլմը, որովհետև նա չի սովորել դասերը մինչև ուշ երեկո: 
 Ձեզ անտեղի մեղադրել են, և մայրիկը բարկացել է ձեզ վրա:	 Քույր ու եղբայր թափել են խաղալիքները և չեն հավաքել: Յուրաքանչյուրը գործը թողել է մյուսին: Մայրիկը բարկացել է:

Դասերը պատրաստելիս հայրիկի օգնության կարիքը կա, բայց նա հոգնած եկել է տուն ու խնդրել՝ իրեն չանհանգստացնել:



- Ձեր կարծիքով, ընդունելի՞ էր լուծման ներկայացված տարբերակը: Ինչու՞:
- Ինչու՞ ոչ:
- Լուծման ուրիշ ի՞նչ տարբերակներ եք հնարավոր համարում:



Տնային հանձնարարություն

Հիշի՛ր ընտանիքիդ հետ անցկացրած ամենահիշարժան օրերից մեկը և նկարագրի՛ այն:

ԴԱՍ 4 – ԸՆՏԱՆԵԿԱՆ ԺԱՄԱՆՑ ԵՎ ՏՈՒՆԵՐ



- Սիրում եք ազատ ժամանակն ընտանիքով անցկացնել: Ինչու՞:
- Ի՞նչն եք հավանում:
- Տխրում եք, եթե համատեղ ժամանցը չի կայանում: Ինչու՞:
- Կուզենայի՞ք միասին ավելի շատ ժամանակ անցկացնել:
- Ի՞նչ եք զգում, երբ ձեր նախատեսած ժամանցը չի կայանում:

1. Նայե՛ք նկարներին և նկարագրեք, թե ինչ ժամանց է, ինչ են մարդիկ զգում, որն եք հավանում և որն եք ավելի հաճախ անցկացնում ձեր ընտանիքում:





- Պատմե՛ք, թե երբ և ինչպես է հանգստանում ձեր ընտանիքը:

2. Ընտանեկան տոներ

- Ո՞ր տոներն են պատկերված նկարներում:
- Որո՞նք են նշում ձեր ընտանիքում: Ինչպե՞ս:
- Օրացույցում գտի՛ր և նշի՛ր ձեր ընտանեկան տոները:
- Ո՞ր տոնին ես անհամբեր սպասում: Ինչու:



- Ինչպե՞ս են մարդիկ շնորհավորում իրար այս կամ այն տոնի առթիվ:



Տնային հանձնարարություն

- Ընտրի՛ր քո սիրած տոնը և դրա մասին փոքրիկ պատմություն գրիր:

ԴԱՍ 5 - ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



1. Լսե՛ք «Պետիկը մենակ է աշխարհում» հեքիաթը, պատասխանե՛ք հարցերին:

- Երբևէ ցանկացե՛լ եք մենակ մնալ: Ինչո՞ւ:
- Ի՞նչ եք զգացել:
- Դժվա՞ր է մենակ լինելը, ինչո՞ւ:
- Ինչո՞ւ են մարդիկ իրար պետք:
- Ի՞նչ կանեիք, եթե մենակ լինեիք, և ինչը չեք կարող մենակ անել:



2.

- Ի՞նչ է ընկերությունը:
- Ո՞վ կարող է ընկեր լինել:
- Ու՞մ եք համարում ձեր ընկերը:
- Ովքե՞ր են ձեր ընկերները:
- Հե՞շտ է պահպանել ընկերությունը:



3. Նայե՛ք նկարները:

- Ո՞ր նկարներն են ձեզ դուր գալիս, ինչո՞ւ:
- Ո՞ր նկարները դուր չեկան, ինչո՞ւ:
- Ի՞նչն է խանգարում իսկական ընկերությանը:
- Ի՞նչ պետք է անել, որպեսզի ընկերությանը ոչինչ չխանգարի:





- Ի՞նչն է կարևոր ընկերության մեջ:
- Երբևիցե օգնե՞լ ես ընկերոջդ, ինչպե՞ս:
- Կարո՞ղ ես հիշել մի դեպք, երբ ընկերդ է քեզ օգնել, պատմի՛ր:
- Ի՞նչ ես զգացել, երբ դու ես օգնել ընկերոջդ և երբ քեզ են օգնել:
- Ի՞նչ ես կարծում, ընկերդ միշտ պետք է քեզ հետ համաձայն լինի, իսկ եթե համաձայն չլինի քեզ հետ, կնեղանա՞ս:



4. Համապատասխանեցրո՛ւ ասացվածքների սկիզբն ու վերջը:

Ոչ թե գանձն է ընկեր,	ասեմ՝ ով ես դու:
Նա չէ ընկեր, ով խղճում է քեզ,	և ընկեր կգտնես:
Ասա ով է ընկերդ,	հներին մի մոռացիր:
Կարողացիր ընկեր լինել	այլ ընկերն է գանձ:
Երբ նոր ընկեր ես գտնում,	այլ նա, ով օգնում է:



5.



- Ու՞մ հետ ես ավելի շատ ընկերություն անում, տղաների՞, թե աղջիկների:

- Ի՞նչ ես կարծում, ովքե՞ր կարող են լավ ընկեր լինել, տղանե՞րը, թե աղջիկները:
- Ինչո՞ւ ես այդպես կարծում:
- Կա՞ն խաղեր, որոնք միայն աղջիկներն են խաղում:
- Կա՞ն խաղեր, որոնք միայն տղաներն են խաղում:
- Ի՞նչ խաղեր եք միասին խաղում: Թվի՞ր:
- Հետաքրքի՞ր է միասին խաղալ, աշխատել:



6. Բաժանվե՛ք խմբերի: Լսեք «Մոռացված խոստում» հեքիաթը, ապա փորձեք միասին ավարտ հորինել:

- Արքայադստեր արարքը ձեզ դուր եկա՞վ:
- Արքայադուստրը օձի համար լա՞վ ընկեր էր: Իսկ օձը: Բացատրե՛ք:
- Ձեր հորինած ավարտները հավանեցի՞ք: Ինչո՞ւ:
- Հիմա կարո՞ղ եք բացատրել՝ ով է իսկական ընկերը:



Տնային հանձնարարություն

- Գրի՛ր հինգ հատկանիշ, որոնք կցանկանայիր ընկերդ ունենար:
- Նկարագրի՛ր ընկերոջդ, նրա ո՞ր հատկանիշն է քեզ դուր գալիս: Ինչո՞ւ:

ԴԱՍ 6 – ՀԱՐԳԱՆՔ ԵՎ ՓՈԽՕԳՆՈՒԹՅՈՒՆ



1.

- Ինչպե՞ս են օգնում մարդիկ իրար:
- Ի՞նչ եք կարծում, ո՞ր դեպքում է ավելի հեշտ հաղթահարել դժվարությունները: Ինչո՞ւ:



2. **Կարդա՛ և կատարիր առաջադրանքները**

- Թղթի վրա մատիտով ուրվագծի՛ր ձեռքիդ 2 ակերը, մկրատով կտրիր:
- Մեկի վրա գրի՛ր քո անունը, իսկ մյուսին՝ այն ընկերոջդ անունը, որը քեզ երբևէ օգնել է:
- Ափերը իրար միացրու ծափ տալու պես, որ անունները մնան ներսի կողմում:
- Դրսի կողմից գրիր, թե ընկերդ ինչով է օգնել:

Շրջելով ծանոթացիր մյուս ընկերներիդ աշխատանքներին, թե ով ինչով է օգնել:



3.

- Լա՛վ է, երբ քեզ օգնում են: Ինչո՞ւ:
- Ի՞նչ ես զգում, երբ քեզ օգնում են:
- Ի՞նչ ես զգում, երբ դու ես օգնում:



4. **Զո՛ւյգ կազմեք, վերցրե՛ք նկարչության թուղթ և միասին որոշեք՝ ինչ եք նկարելու:**

- Միաժամանակ սկսեք նկարել՝ յուրաքանչյուրդ օգտագործելով թղթի մի մասը, բայց այնպես, որ ստանաք նախօրոք որոշած ամբողջական պատկերը:



- Հաջողվե՞ց ստանալ նախապես որոշած պատկերը:
- Հե՞շտ էր միասին աշխատել:
- Ի՞նչն էր դժվարացնում աշխատանքը:
- Ի՞նչն էր օգնում միասին աշխատելուն:
- Մենա՞կ, թե երկուսով է հեշտ աշխատել:
- Ի՞նչ առավելություն ունի մենակ աշխատելը:
- Ի՞նչ առավելություն ունի ընկերովի աշխատելը:



5. Կարդացե՛ք իրավիճակները և խմբում քննարկեք, թե ձեր կարծիքով տվյալ իրավիճակում հայտնված մարդն ինչ է զգում, ինչպես կարելի է նրան օգնել:



- Հիշի՞ր մի դեպք, երբ քեզ օգնել են դժվարության պահին. ի՞նչ ես զգացել:
- Հիշի՞ր մի դեպք, երբ դու ես օգնել որևէ ընկերոջ, որն այդ պահին դժվարացել է հաղթահարել իր խնդիրը:

ԴԱՍ 7 - ԵՍ ԷԼ ԵՄ ՔԵՐ ՆՄԱՆ



- Երբևէ պատահե՞լ է, որ ձեր ընկերները չեն ցանկացել ձեզ հետ խաղալ: Ի՞նչ եք զգացել:
- Երբևէ պատահե՞լ է, որ չկարողանաք մի բան անել: Ի՞նչ եք զգացել:
- Ձեզ երբևէ ծաղրե՞լ են: Ի՞նչ եք զգացել:
- Ի՞նչ եք զգում, երբ ընկերները օգնում են ձեզ:
- Ի՞նչն է կարևոր ընկերության մեջ:

1. Նայե՛ք նկարները և հորինեք մի պատմություն:



- Պատահե՞լ է, որ ոմանք ծաղրեն մյուսների թուլությունները: Ի՞նչն է եղել պատճառը:
- Դիմացինի վիճակում իրեն պատկերացնելը կարո՞ղ է օգնել, որ մարդիկ ուրիշներին չծաղրեն:

Մարդիկ տարբեր են, տարբեր են նաև նրանց կարողությունները: Այն, ինչ մեկը հեշտությամբ է անում, մյուսին կարող է դժվար թվալ: Մեկը կարող է հեշտությամբ ցատկել, մյուսը՝ ոչ, մեկը լավ է նկարում, մյուսին բոլորովին չի հաջողվում, ինչը կարող է առաջինին զարմացնել: Մեկն այնքան էլ լավ չի տեսնում, բայց լավ լսողություն ունի, մեկն արագավազ է, մյուսը, թեև դանդաղ ու դժվարությամբ է շարժվում, սրամիտ է, հետաքրքիր գրուցակից և հեշտությամբ է խնդիր լուծում:



• **Լրացրե՛ք սյունակները:**

Ես լավ եմ կարողանում՝	Ես դժվարանում եմ՝

ԴԱՍ 8 – ԻՄ ՏՈՒՆԸ, ԻՄ ԲԱԿԸ, ԻՄ ՓՈՂՈՑԸ



- Որտե՞ղ է գտնվում ձեր տունը:
- Որտե՞ղ է գտնվում ձեր թաղամասը:
- Որտե՞ղ է գտնվում ձեր գյուղը կամ քաղաքը:
- Իսկ որտե՞ղ է գտնվում ձեր երկիրը:

1. «Իմ աշխարհը»

Երբ բացում եմ իմ տան դուռը, սկսվում է իմ շքամուտքը, այնտեղ, որտեղ վերջանում է իմ շքամուտքը, սկսվում է իմ բակը, այնտեղ, որտեղ վերջանում է իմ բակը, սկսվում է իմ փողոցը, իմ փողոցից այն կողմ իմ գյուղն է, կամ իմ քաղաքը, իսկ իմ քաղաքն ու գյուղը իմ երկրում են, իսկ իմ երկիրը մի մեծ, կապույտ-կանաչ մոլորակի վրա է գտնվում, որն էլի իմն է: Իմ գլխի վերևում իմ երկինքն է, որտեղ շողում է մեր բոլորի Արեգակը: Ես ինձ ապահով եմ զգում իմ բակում, իմ փողոցում, իմ երկրում, որովհետև իմն է, այստեղ ամեն ինչ ծանոթ է ինձ, այստեղ ես օտար չեմ:



1. Լսե՛ք «Թե ինչ պատահեց, երբ քամին խառնեց բոլոր ցուցանակները» հեքիաթը և մտորեք:

- Իսկ դուք ճանաչո՞ւմ եք ձեր թաղամասը: Կարո՞ղ եք կողմնորոշվել ձեր թաղամասում և գտնել անհրաժեշտ վայրը՝ դպրոցը, խանութը, կանգառը և այլն:
- Ո՞ր վայրերն են հատկապես կարևոր ձեր թաղամասում, որոնց տեղն անպայման պետք է իմանաք:
- Ինչի՞ համար են ցուցանակները:
- Ովքե՞ր են օգտվում ցուցանակներից:
- Առանց դրանց հե՞շտ, թե դժվար կլինի:
- Իսկ դուք կարո՞ղ եք կողմնորոշվել ցուցանակներով:
- Իսկ եթե տարածքում ցուցանակներ չկան, ինչպե՞ս կարող եք գտնել ձեր ուղած վայրը և հասնել այնտեղ:


Եկեք միասին դուրս գանք և փորձենք ցուցանակներով կամ հիշողությամբ, կամ էլ հարցուփորձ անելով կողմնորոշվել տարածքում:



Տնային հանձնարարություն

Նկարել տուն-դպրոց ճանապարհը, ճանապարհի 2-3 հիմնական շենքեր և ցուցանակներ, որոնք օգնում են հիշելու ճանապարհը, ապա մեծերի օգնությամբ լրացնել տան հասցեն և մտապահել:

Նման օրինակով փորձի՛ր գծել
և ներկայացնել քո դպրոցի
ճանապարհը:



ԴԱՍ 9 – ԵԿԵՔ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԵՆՔ



1.

- Ճանաչում եք ձեր քաղաքը կամ գյուղը:
- Կարողանում եք հեշտությանբ գտնել ձեզ անհրաժեշտ վայրը:
- Իսկ կարողանում եք անծանոթ վայրում կողմնորոշվել:
- Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ անծանոթ տարածքում կողմնորոշվելու համար:



2.

Շատ կարևոր է իմանալ, թե որ կողմում են **արևելքը, արևմուտքը, հարավը, հյուսիսը**:

Երբ առավոտյան արթանաս, կանգնիր դեմքով դեպի արևը,

- հենց դա էլ **արևելքն** է,
- քո հետևում կլինի **արևմուտքը**,
- իսկ աջ կողմում՝ **հարավը**,
- **հյուսիսն** էլ կլինի ձախ կողմում:



3. Նայի՛ր էջ 38-ի քարտեզին և պատասխանի՛ր հարցերին (աշխատանք դասագրքով):



4. Դո՛ւրս եկեք բակ, կանգնեք դեմքով դեպի արևելք և պարզեք, թե ինչ կա ձեզնից աջ, ձախ, որտեղ է գտնվում վարսավիրանոցը, կոշկակարանոցը, դպրոցը, հիվանդանոցը, մանկապարտեզը, ոստիկանատունը, գրադարանը: Փորձի՛ր նկարագրել՝ օգտագործելով **աջ, ձախ հյուսիս, հարավ, դիմացը, մոտ, հեռու, արևմուտք, արևելք, հյուսիս, հարավ, միջև, հանդիպակաց բառերը**:



5. Աշխատելով խմբով՝ ավարտեք պատմությունները (էջ 39):



Տնային հանձնարարություններ

- **Նախապատրաստվե՛ք կարճաժամկետ նախագծային աշխատանքի:
Բաժանվե՛ք խմբերի, հավաքեք տեղեկություններ սեփական բնակավայրի՝**
 - բուսական աշխարհի,
 - կենդանական աշխարհի,
 - մարդկանց զբաղմունքի,
 - բնակչության թվի,
 - տեսարժան վայրերի,
 - տոների և տոնակատարությունները նշելու մասին:

ԴԱՍ 10 – ԻՄ ՔԱՂԱՔԸ, ԻՄ ԳՅՈՒՂԸ



1.

- Ինչպե՞ս է կոչվում ձեր բնակավայրը:
- Ո՞ր մարզում է այն գտնվում:
- Դու քաղաքո՞ւմ, թե գյուղում ես ապրում:
- Ի՞նչ տարբերություն կա քաղաքի և գյուղի միջև:
- Ինչո՞ւ քաղաքում ընտանի կենդանիներ չեն պահում, մշակովի հողատարածքներ չկան:
- Որտե՞ղ են աշխատում քաղաքի և որտեղ գյուղի բնակիչները:
- Եկեք քարտեզի վրա միասին գտնենք մեր մարզը, ապա քաղաքը կամ գյուղը:



2. Նկարի՛ր և ընկերներիդ պատմի՛ր քաղաքիդ կամ գյուղիդ ամենահետաքրքիր վայրերի մասին:



3. Լրացրո՛ւ և սովորի՛ր հասցեդ:



4. «Ամենից լավ տունը»



Տնային հանձնարարություն

Բաժանվե՛ք խմբերի, հավաքե՛ք տեղեկություններ սեփական բնակավայրի՝

- ամենահայտնի մարդու,
- ամենահին շենքի,
- ամենահին դպրոցի, մանկապարտեզի,
- ամենածեր մարդու,
- ամենահին ծառի և տնկողի,
- պահպանվող մշակութային կառույցի,
- ամենահին փողոցի,
- և այլն:

ԴԱՍ 11 – ԻՄ ՀԱՅՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ



1.

- Ո՞վ է սիրում իր քաղաքը/ գյուղը, երկիրը:
- Ինչպե՞ս եք արտահայտում ձեր սերը հայրենի բնակավայրի հանդեպ:



2. Համեմատե՛ք նկարները՝ մեկնաբանելով:





3. Նախագծային աշխատանքների ներկայացումներ:



Տնային հանձնարարություն

- Նկարե՛ք «Մեր սիրելի բնակավայրը» և «Ես հպարտանում եմ» պաստառների համապատասխան նկարներ:

2-րդ ԴԱՍԱՐԱՆ
ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ
ԹԵՄԱ 4 – ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՈՆՖԼԻԿՏ

Աշակերտի նյութերի փաթեթ

© **Լուսինե Ալեքսանյան, Հասմիկ Անտոնյան**

ԹԵՄԱ 4 - ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՈՆՖԼԻԿՏ

ԴԱՍ 1 – ԱՐԱՐՔ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔ



1.

- Ինչի՞ համար են դասարանական կանոնները:
- Ինչո՞ւ պետք է պահպանենք դրանք:
- Կանոններին հետևելը կարո՞ղ է ազդել ընկերական փոխհարաբերությունների վրա: Ինչպե՞ս:
- Կարո՞ղ եք օրինակներ բերել:
- Իսկ չհետևելու դեպքում ի՞նչ կարող է լինել, ի՞նչ հետևանքներ կարող են լինել:
- Պատահե՞լ են այդպիսի դեպքեր: Պատմե՛ք՝ ինչով են ավարտվել:



2. Աշխատելով զույգերով՝ եկեք մշակենք դասարանական այնպիսի կանոններ, որոնք կօգնեն լավ փոխհարաբերություններ կառուցելուն:



3. Նայե՛ք նկարներին և վերլուծե՛ք իրավիճակները:



- Ո՞ր նկարներում են երեխաներն իրենց սխալ պահում:
- Ձեր կարծիքով՝ ի՞նչ պիտի անեին:
- Պատահե՞լ է, որ ձեր որևէ արարքից ամաչեք: Ի՞նչ եք զգացել:
- Ո՞ր արարքներից հետո եք ձեզ լավ զգացել:



4. Լսե՛ք պատմությունը և ծափ տվեք, երբ, ձեր կարծիքով, Տիգրանը վատ արարք է կատարում:

- **Տեքստից դուրս գրեք Տիգրանի բոլոր վատ արարքները, ապա գրեք, թե դրանք ինչ հետևանքներ կարող են ունենալ:** (Օրինակ՝ դասը չէր լսում, հաջորդ օրը «2» կստանար:)



5. Լսե՛ք «Սուտասանը» պատմությունը և պատասխանեք հարցերին:

- Ինչո՞ւ հարևանները չհավատացին կատակասեր մարդուն:
- Ինչպե՞ս կգնահատեք նրա արարքը:
- Ձեր կարծիքով՝ հարևանները ճի՞շտ վարվեցին: Ինչո՞ւ:
- Նշի՛ր կատակասեր մարդու արարքը և ասա, թե ինչ հետևանք ունեցավ այն:



Տնային հանձնարարություն

- Հիշի՛ր, արե՞լ ես արդյոք մի բան, որ կուզենայիր արած չլինելի:
- Եթե հայտնվեիր նույն իրավիճակում, ինչպե՞ս կվարվեիր այս անգամ:
- Ի՞նչ լավ արարք ես կատարել, որ կցանկանայիր պատմել:

ԴԱՍ 2 – ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



1.

- Ի՞նչ ես հասկանում, երբ ասում ես՝ իրավունք ունեմ:
- Ի՞նչ ես հասկանում, երբ ասում ես՝ իմ պարտականությունն է:
- Եղե՛լ է այնպիսի դեպք, երբ չես կատարել պարտականություններդ: Ի՞նչ ես զգացել:



2. Խմբով աշխատելով՝ ծրարի միջից ընտրեք որևէ քարտ և փակցրեք ձեր պատահի համապատասխան վերնագրի տակ:



3. Նայե՛ք նկարները: Ասացե՛ք՝ որ նկարը որ իրավունքի մասին է հուշում:



Կան պահանջներ, որոնք, անկախ մեր կամքից, պետք է կատարենք: Դրանք մեր **պարտականություններն են**: Օրինակ՝ ուշադիր լինել, դասերի ժամանակ չխոսել, միջանցքներում չբղավել, շքամուտքը չկեղտոտել, աղբը աղբանոցում թափել և այլն:

Երբ ցանկանում ենք հանգստանալ, խաղալ, ապահով լինել, կրթություն ստանալ, դրանք էլ մեր **իրավունքներն են**:

Երեխան իրավունք ունի՝

- Հանգստի
- Սիրո և քնքշանքի
- Առողջ լինելու
- Մնվելու
- Կրթություն ստանալու

Ես **իրավունք** ունեմ. նշանակում է՝ ես կարող եմ անել:

Ես պարտավոր եմ. նշանակում է՝ ես պետք է անեմ:



3. Խմբով քննարկե՛ք իրավիճակները, մեկնաբանե՛ք՝ ովքեր չեն կատարել իրենց պարտականությունները, ում ո՛ր իրավունքն է խախտվել:

1-ին խումբ

Ուսուցիչները հրաժարվեցին աշխատելուց: Նրանք թողեցին իրենց աշխատանքը և որոշեցին հանգստանալ:

2-րդ խումբ

Քաղաքում հրդեհ էր բռնկվել, վառվում էր մի մեծ խանութ: Բոլոր հրշեջները մեկնել էին սպորտային մրցումների:

3-րդ խումբ

Բժիշկները որոշել էին զբաղվել հաճելի գործերով՝ գնալ թանգարաններ, կինոդիտումներ կազմակերպել, թատրոն հաճախել:

4-րդ խումբ

Անկարգությունները, գողությունները շատացել էին, բայց քաղաքում մի ոստիկան չկար: Նրանք մասնակցում էին տոնական միջոցառումներին:



Ամեն մարդ առողջ լինելու, կրթություն ստանալու, պաշտպանված լինելու, մաքուր միջավայրում ապրելու, սնվելու, հանգստանալու իրավունք ունի:



Տնային հանձնարարություն

- Լրացրե՛ք ձեր իրավունքների և պարտականությունների շարքերը:**

Իմ պարտականությունները	Իմ իրավունքները
Չուշանալ դասերից	Օգտվել գրադարանից

ԴԱՍ 3 – ԹՈՒՅԼ ՉՏԱՆՔ



1. Դասավորե՛ք «Կամակոր իշուկները» նկարները, դասավորեք ըստ հավանական ընթացքի, ավարտե՛ք պատմությունը:

- Ի՞նչ խնդրի առաջ էին կանգնել երկու իշուկները պատմության սկզբում:
- Ինչպե՞ս էին փորձում վարվել սկզբում: Արդյունքի հասա՞ն:
- Ինչո՞ւ արդյունքի չհասան:
- Ինչպե՞ս լուծեցին խնդիրը:
- Արդյոք երկուսն էլ հասա՞ն իրենց ուզածին:
- Կա՞ն ուրիշ լուծումներ, ուրիշ տարբերակներ:
- Ի՞նչ էր անհրաժեշտ «հաղթանակ-հաղթանակ» տարբերակի համար:
- Փորձե՛լ եք առաջադրանք կատարել՝ որևէ մեկի հետ համագործակցելով: Պատմի՛ր այդ մասին:



2. Խմբում ուսումնասիրե՛ք նկարները, հորինեք պատմություն ձեր ընտրած նկարի վերաբերյալ:





3. Բաժանվե՛ք խմբերի, կարդացե՛ք ձեզ բաժին ընկած պատմությունը և խմբով փորձե՛ք բեմականացնել այն:

1.Անին օդապարուկ էր նվեր ստացել: Ուրախ-ուրախ իջավ բակ, որ ընկերների հետ թռցնի: - Շուտ եմ ասել՝ առաջինը ե՛ս եմ թռցնելու,- բղավեց Տիգրանն ու Անիի ձեռքից թռցրեց օդապարուկը: - Դու ձևը չգիտես, թող ցույց տամ,- ասաց Գրիգորը և փորձեց օդապարուկը խլել Տիգրանից: - Քեզ ո՞վ ասաց,- վրդովվեց Տիգրանը՝ օդապարուկը ձեռքից բաց չթողնելով: Շարունակելով վիճել՝ տղաներն այնքան ձեռքից ձեռք քաշքշեցին օդապարուկը, մինչև պարանը կտրվեց: Օդապարուկը վեր բարձրացավ ու անհետացավ կապույտ երկնքում: Բոլորը մնացին շվարած:
2. Մի օր երեխաները, ծառի տակ նստած, հեքիաթ էին կարդում. «Մի գյուղացի անտառի բացատում որոշում է գազար ցանել: Մեկ էլ անտառից մի արջ է դուրս գալիս, գյուղացուն տեսնում է ու հարցնում, թե կարելի է ինքն էլ օգնի, վերջում էլ բերքը հավասար կիսեն: Գյուղացին ասում է. «Շատ բարի: Թե ինձ հետ հավասար աշխատես, ցողունները քեզ, արմատները՝ ինձ»: Միամիտ արջը համաձայնում է, սկսում են աշխատել: Արջը բացատի կոճղերն է հավաքում, հողը փորում է, իսկ գյուղացին սերմն է ցանում: Գալիս է բերքը հավաքելու ժամանակը: Խորամանկ գյուղացին, ասածի պես, հյուսիս գազարներն իրեն է պահում, իսկ անպետք ցողունները տալիս է արջին: Արջը հասկանում է, որ իրեն խաբել են, բայց ի՞նչ կարող էր անել: Քոռ-փոշման վերադառնում է անտառ»: - Խեղճ արջ,- վրդովված բացականչեցին երեխաները և որոշեցին այս հեքիաթի համար ավելի արդարացի վերջաբան հորինել:
3. Բակի հեռավոր անկյունում մի ազատ տարածք կար: Հայրիկները որոշեցին ավտոտնակներ կառուցել: Մայրիկները ըմբոստացան, նրանք կարծում էին, որ այդ տարածքը շատ հարմար է լվացքի պարաններ կապելու համար: Վեճ սկսվեց: Ոչ ոք չէր ուզում դիրքերը գիջել: Վեճի թեժ պահին մեկ էլ նկատեցին, որ երեխաները, միասին համերաշխ աշխատելով, արդեն քարերից մաքրել ու կարգի են բերել տարածքը: Բոլորը հասկացան, որ ամենաճիշտն այդտեղ խաղահրապարակ կառուցելն էր: Այս լուծումն ուրախացրեց բոլորին, այլևս չէին անհանգստանա, թե երեխաներն ազատ ժամանակն ինչպես են անցկացնում, բացի այդ, բակը կբարեկարգվի, կկանաչապատվի, փոշին էլ քիչ կլինի:

- Այդ պատմությունների մեջ ո՞վ շահեց և ո՞վ տուժեց, ինչո՞ւ:



Տնային հանձնարարություն

Քննարկի՛ր իրավիճակները և ընտրի՛ր ու նշի՛ր, թե ներկայացված իրավիճակներից որն է տանում հաշտեցման, որը՝ ընդհարման:

1. Երեխաները բախում ֆուտբոլ են խաղում: Տիգրանը գնդակը փոխանցում է Քուչոյին, բայց Քուչոն ուշադիր չի լինում և գնդակը բաց է թողնում:

ա) **Տիգրան** – Քուչո՛, ապուշի մեկը, քո պատճառով պարտվեցինք:

բ) **Տիգրան** – Քուչո՛ ջան, սրանից հետո աշխատիր ուշադիր լինել, որ չպարտվենք:

2. Լուսինեն մեծ եղբորը խնդրում է օգնել լուծելու մաթեմատիկական խնդիրը: Բայց եղբայրը ցանկություն չունի:

ա) **Լուսինե** – Տիգրա՛ն, մամային կասեմ, որ չես ուզում օգնել, ու դու կտեսնես:

բ) **Լուսինե** – Տիգրա՛ն ջան, ախր ես քո բացատրածը շատ հեշտ եմ հասկանում:

3. Անին ճոճանակ է նստել: Գրիգորն էլ է ուզում ճոճվել:

ա) **Գրիգոր** – Խո՛ւզ, հերիք է ճոճվես, իջիր՝ ես նստեմ, թե չէ գնդակով կխփեմ, կընկնես ցած:

բ) **Գրիգոր** – Անի ջան, կթողնե՞ս ես էլ ճոճվեմ, ուզո՞ւմ ես, դու էլ իմ գնդակով խաղա:

ԴԱՍ 4 – ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐ

1. Լսե՛ք «Հրաշալի բառը» պատմությունը և պատասխանեք հարցերին:

Երկար սպիտակ մորուքով մի ծերունի նստած էր նստարանին և ձեռնափայտով ինչ-որ բան էր գծում ավազի վրա:

- Տե՛ղ տվեք,- ասաց Արամը բարձր ու կոպիտ ծայնով և նստեց նստարանի ծայրին:

Ծերունին տեղ տվեց և, նայելով տղայի կարմրած ու բարկացած դեմքին, ասաց.

- Քեզ ինչ-որ բան է պատահել: Դու քիչ առաջ գոռացել ես, լաց ես եղել, հետո էլ մեկի հետ կռվել ես:

- Ոչ ոք ինձ չի սիրում,- ասաց տղան և թևով սրբեց արցունքները,- բոլորը բարկանում են ինձ վրա, ինչ ուզում եմ՝ չեն տալիս...

Ծերունին շոյեց երկար մորուքը և ասաց.

- Դու երևի կոպիտ ես խոսում բոլորի հետ: Լսի՛ր, տղա՛ս, ես ուզում եմ քեզ օգնել: Մի հրաշալի բառ կա, այդ բառը ում էլ ասես, քեզ կլսի:

Տղան աչքերը չռեց:

- Ես քեզ կսովորեցնեմ այդ բառը: Բայց հիշիր, որ այդ բառը պետք ասել մեղմ ծայնով և ուղիղ նայելով նրա աչքերի մեջ, ում հետ խոսում ես:

Ծերունին տղայի ականջին ինչ-որ բան ասաց և ավելացրեց.

- Դա հրաշալի բառ է, բայց չմոռանաս՝ ինչպես պետք է ասես այն:

Տղան վեր թռավ տեղից և վազեց տուն:

Քույրը, սեղանի մոտ նստած, նկարում էր: Կանաչ, կարմիր, դեղին, կապույտ ներկերը թափված էին սեղանի վրա: Եղբորը տեսնելով՝ նա իսկույն ներկերը ձեռքերով ծածկեց:

Տղան մոտեցավ քրոջը և նայելով նրա աչքերի մեջ, ասաց.

- Քույրի՛կ ջան, խնդրում եմ, ինձ մի ներկ տուր:

Քույրը լայն բացեց աչքերը և ձեռքերը ետ տանելով ներկերի վրայից՝ քթի տակ ասաց.

- Ո՞րն ես ուզում:

- Կապույտը,- անհամարձակ ասաց տղան:

Նա ներկը վերցրեց, գնաց-եկավ սենյակում ու ներկը հետ տվեց քրոջը. նրան ներկ պետք չէր, նա ուզում էր փորձել ծերունու սովորեցրած հրաշալի բառի ուժը:

Տղան շտապեց խոհանոց:

Տատը գազօջախի վրայից վերցնում էր տաք բլիթները:

Թողը մոտեցավ տատին, նայեց աչքերի մեջ ու կամացուկ ասաց.

- Տատի՛կ, խնդրում եմ, ինձ մի բլիթ տուր:

Տատը զարմացավ:

- Տա՛ք, թե սառն ես ուզում, բալի՛կս,- ասաց տատիկը՝ ընտրելով ամենալավը:

Տղան ուրախությունից վեր թռավ: «Հրաշալի է, հրաշալի է», - ասաց ինքն իրեն ու վազեց պուրակ: Նա շտապում էր, որ շնորհակալություն հայտնի ծերունուն:



- Ինչո՞ւ էին բոլորը վատ վարվում տղայի հետ:
- Դու ինչպե՞ս ես վարվում նման դեպքերում:
- Ի՞նչը օգնեց պատմվածքի հերոսին:

- Էլ ի՞նչը կարող է ընդհարումների պատճառ դառնալ:
- Կա՞ն բառեր, որոնք օգնում են կանխել ընդհարումները: Որո՞նք են: Թվի՛ր:



2. Խմբով աշխատելով՝ փորձեք կազմել բարեկրթության կանոնների ցանկ՝ գտնելով և միացնելով նախադասությունների կեսերը:

Կոնֆետի թուղթը գետնին մի գցիր,	բարեկամներին, ուսուցիչներին, ընկերներին:
Երբեք մի ընդհատիր	անքաղաքավարի բառեր:
Միշտ բարևիր հարևաններին,	բարձր ձայնով:
Դասարան մտնելիս զիջիր	ուշադիր, համբերատար լսիր զրուցակցիդ:
Երբեք մի խոսիր	քեզ որևէ բան պատմողին:
Քո խոսքը ասելուց առաջ	այլ նետիր աղբամանը:
Հարկ եղած դեպքում	ծերերին, փոքրերին:
Հաճախ օգտագործիր	մի խուսափիր ասել՝ շնորհակալություն:
Միշտ օգնիր	քաղաքավարի բառեր՝ շնորհակալություն, ներողություն, խնդրեմ:
Երբեք մի օգտագործիր	ուսուցչիդ, դասընկերոջդ:

- Քաղաքավարության կանոնները չպահելու համար որևէ մեկին պատժո՞ւմ են:
- Ինչո՞ւ պետք է իմանալ բարեկրթ լինելու կանոններ:
- Ե՞րբ պետք է պահպանել այդ կանոնները:



3. Լսեք «Նվերը» պատմությունը և պատասխանեք հարցերին:

- Ձեզ հետ երբևէ պատահե՞լ է նման դեպք:
- Ինչպե՞ս եք վարվել, պատմե՛ք այդ մասին:
- Կարո՞ղ եք այնպես ավարտել այս պատմվածքը, որ Դնչիկն ու Թուխը կարողանան հաշտվել:
- Եկե՛ք քննարկենք ձեր առաջարկների լավ ու վատ կողմերը, թե ինչ հետևանքներ կարող են լինել:
- Ո՞րն է լավագույն լուծումը:



4. Կարդացե՛ք ձեր զույգին տրված իրավիճակները և գտե՛ք ընդհարման պատճառը: Փորձե՛ք այնպիսի պատասխաններ մտածել, որ խուսափեք վեճից: Ներկայացրե՛ք դերախաղով:

- Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ վարքը կարող է ընդհարման պատճառ դառնալ:
- Յուրաքանչյուրիս պահվածքը կարևո՞ր է ընդհարումից խուսափելու համար: Ինչո՞ւ:
- Մենք կարո՞ղ ենք ինքներս մեր վարքը կառավարել: Ինչպե՞ս:
- Հեշտությամբ հորինեցիք իրավիճակի ավարտը:
- Ինչպե՞ս դերաբաշխում կատարեցիք:
- Ի՞նչ դժվարությունների հանդիպեցիք:
- Ինչպե՞ս հաղթահարեցիք այդ դժվարությունները:
- Ինչպիսի՞ն պետք լինի խմբի յուրաքանչյուր անդամ:

Հաճախ է պատահում, որ միմյանցից նեղանում ենք, միասին աշխատելիս որոշ հարցերի շուրջ անհամաձայնություններ ենք ունենում, չենք զիջում, նույնիսկ չենք ուզում լսել իրար, կոպիտ ենք վարվում, չնչին առիթներով միմյանց վիրավորում ենք:

Բայց ավելի լավ չէ՞, երբ հաշտ ենք, համերաշխ: Ինչը՞ կարող է դրան օգնել: Իհարկե՞, բարեկիրթ պահվածքը, մանավանդ որ հաշտվելու համար ավելի շատ ջանքեր են պետք:

Իզուր չի ասված՝ **«Առաջ մտածիր, հետո խոսիր»:**



Տնային հանձնարարություն

Լրացրո՛ւ նախադասությունները «կախարդական» բառերով:

- Ես անկարգություն էի արել և մայրիկից խնդրեցի:
- Ուսուցչուհին ասաց. «....., Արմեն, դասդ լավ ես սովորել»:
- Մարդիկ հանդիպելիս միմյանց «» են ասում:
- «», - ասաց Լուսիկը՝ կարկանդակը տատիկից վերցնելով:
- «», - ասաց տատիկը՝ կարկանդակը տղային տալով:

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ
2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
ԹԵՄԱ 5-6
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՇՈՒՐՋԸ
Աշակերտի ուսումնական նյութ

© Լուսինե Ալեքսանյան, Հասմիկ Անտոնյան

ԹԵՄԱ 5-6. ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՇՈՒՐՋԸ

ԴԱՍ 1 - ԿԵՆԴԱՆԻ ԵՎ ԱՆԿԵՆԴԱՆ ԲՆՈՒԹՅՈՒՆ



1. Նայե՛ք ձեր շուրջը և թվարկե՛ք այն ամենը, ինչ տեսնում եք:



2. Ուշադի՛ր նայեք նկարներին, պատկերները բաժանեք երկու խմբի՝ տարբերակելով մարդու ստեղծածը բնության ստեղծածից:




- Կարո՞ղ ես, շուրջդ նայելով, թվել այլ առարկաներ, որոնք ստեղծել է մարդը:
- Հեշտությամբ տարբերակեցի՞ք պատկերները:
- Ո՞ր պատկերը դժվարություն առաջացրեց: Ինչո՞ւ:

Արևը, աստղերը, հողը, սարերը, գետերն ու լճերը, բույսերն ու կենդանիները բնություն են: Իսկ գիտե՞ք, որ բնությունը կազմված է կենդանի և անկենդան մարմիններից, որոնց անվանում են նաև կենդանի բնության և անկենդան բնության մարմիններ:

Կենդանի բնության մարմինները **շնչում են, սնվում, աճում, բազմանում և մահանում:** Անկենդան բնության մարմիններն այս հատկանիշներով օժտված չեն, **դրանք ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել ձևերով և չափերով:**

3. Հետևյալ նկարներում գտի՛ր և տարբերակի՛ր կենդանի և անկենդան բնության տարրերը:





Նայե՛ք նկարները: Ի՞նչ կարող եք ասել այս նկարների մասին:





Կենդանի բնության յուրաքանչյուր տարր ապրում է **անկենդան բնության** որոշակի միջավայրում, որտեղ ապահովվում են նրա ապրելու պայմանները:



Տնային հանձնարարություն

Վերցրե՛ք մի քիչ բամբակ, թրջե՛ք, դրեք ամանի մեջ, վրան ցորենի հատիկներ լցրեք:
Պահե՛ք խոնավ, որ չչորանան, այլ ծիլեր տան:

- ա) Մեկնաբանի՛ր հետևյալ ասացվածքը:
 Զուրը կյանքի աղբյուր է:
- բ) Գտի՛ր և գրառի՛ր ևս մի քանի ասացվածքներ ջրի կարևորության մասին:

ԴԱՍ 2 - ԲՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ






Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է անհրաժեշտ բույսերին, կենդանիներին և մարդուն ապրելու համար: Թվե՛ք:



1. Խմբով դուրս եկեք դպրոցի բակ և ուսումնասիրե՛ք բույսերը:

- Ի՞նչ պարզեցիք:
- Ինչո՞ւ են բույսերը, որոնք ամրացած են հողին, փոխում իրենց դիրքը:
- Ի՞նչ կլինի, եթե երկար ժամանակ բույսերը չջրվեն:
- Եթե բույսերը չորանան, ի՞նչ կլինի:
- Էլ ո՞վ ունի հողի, ջրի, արևի, օդի կարիք: Կարո՞ղ ես բացատրել:

Բույսերին, կենդանիներին, մարդուն սնվելու, շնչելու, աճելու, բազմանալու, շարժվելու համար անհրաժեշտ են օդ, լույս, ջերմություն, սնունդ, ջուր: Լույսը և ջերմությունը ստանում են Արեգակից: Առանց օդի և ջրի չեն կարող ապրել և՛ մարդիկ, և՛ բույսերը, և՛ կենդանիները:





2. Նայե՛ք նկարին, փորձեք գտնել անկենդան և կենդանի բնության կապերը:




Բացատրի՛ր, թե անկենդան և կենդանի բնության մարմիններն ինչպես են իրար հետ կապված:

Մենք արդեն գիտենք, թե արևը, օդը, ջուրը ինչ նշանակություն ունեն կենդանի օրգանիզմների համար: Որևէ մեկի բացակայության դեպքում ո՛չ բույսերը, ո՛չ կենդանիները, ո՛չ էլ մարդիկ չեն կարող ապրել: Այսպիսով՝ բնության մեջ գոյություն ունեն անտեսանելի կապեր:



3. Նայե՛ք նկարներին, ցույց տվեք այն կապերը, որոնք գոյություն ունեն նկարներում պատկերված բույսերի և կենդանիների, ինչպես նաև տարբեր կենդանիների միջև:



Հիշի՛ր՝ բնության մեջ այն կապերը, որոնք գոյություն ունեն բույսերի և կենդանիների, ինչպես նաև տարբեր կենդանիների միջև և ցույց են տալիս, թե որ կենդանին ինչով է սնվում, անվանում են **«սննդային շղթա»**:

- Կազմե՛ք «սննդային շղթայի» այլ օրինակներ:



4. Նկարների համարները դասավորեք այնպես, որ ստացվի հաջորդական շղթա:



1



2



3



4



5



Տնային հանձնարարություն

Վերցրե՛ք երկու փոքրիկ ծաղկաման, լցրեք հողով: Երկուսում էլ տնկեք այն փոքրիկ ծիլերը, որոնք արմատակալել են: Մեկը դրեք պատուհանի գոգին, մի մոռացեք ջրել, իսկ մյուսը թող մնա սենյակի անկյունում: Դիտարկե՛ք մեկ շաբաթ և նկարագրեք՝ ինչ կատարվեց բույսերի հետ:

ԴԱՍ 3 - ՄԱՐԴԸ ԵՎ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ



1. Նայե՛ք ձեր շուրջը, հետազոտե՛ք այն առարկաները, որոնք տեսնում եք:

- Ինչպե՛ս են ստեղծվել դրանք, ո՞վ է ստեղծել:
- Ի՞նչ դեր ունի մարդը բնության մեջ: Ի՞նչ գիտեք այդ մասին:
- Ի՞նչ կլիներ, ինչպիսի՞ն կլիներ մեր կյանքը, եթե մարդը չստեղծեր այսքան առարկաներ, անհրաժեշտ իրեր:
- Պատկերացնո՞ւմ եք մեր կյանքն առանց բույսերի, ծառերի, ծաղիկների:



2. Նայե՛ք նկարներին, բաժանե՛ք երկու խմբի:



- Ինչպե՛ս դասակարգեցիք:
- Ո՞ր խումբը ձեզ ավելի դուր եկավ, ինչո՞ւ:

Մարդը բնության մի մասնիկն է: Նրան նույնպես, մյուս կենդանիների նման, անհրաժեշտ են օդ, լույս ջերմություն, սնունդ: Նա իր սնունդն ու անհրաժեշտ իրերը ստանում է բնությունից: Ստեղծում է, կառուցում, պատրաստում տարբեր ճաշատեսակներ, օգտվելով բույսերից՝ բուժում տարբեր հիվանդություններ: Իր ողջ կյանքի ընթացքում մարդը շատ հաճախ անխնա օգտագործում է բնության պարգևները, բնությանը հասցնում մեծ վնասներ:

- Կարո՞ղ եք թվել, թե ինչ վնասներ է հասցնում մարդը բնությանը:



3 . Իսկ գիտե՞ք, որ մարդն իր գործունեության ընթացքում գնահատել է բնության պարգևները և միշտ հիացել է բնության գեղեցկությամբ:

- Ինչպե՞ս է մարդն արտահայտել իր վերաբերմունքը: Թվե՛ք:



4. Ընտրե՛ք ձեր նախասիրած ձևը և ստեղծագործե՛ք՝ պատկերե՛ք բնությունը:

• նկարով • բանաստեղծությամբ • հեքիաթով • հանելուկով	• ծեփելով • երգելով • ասեղնագործելով • այլ կերպ
--	--



Տնային հանձնարարություն

Կարմիր օղակի մեջ վերցրու այն, ինչ ստանում ենք բույսերից, իսկ կապույտ օղակի մեջ՝ այն, ինչ ստանում ենք կենդանիներից:




ԴԱՍ 4 - ԲՈՒՅՍԵՐ



- Հետազոտե՛ք ձեր շուրջը, նշե՛ք ի՞նչեր եք տեսնում:
- Թվարկեք կենդանի և անկենդան բնության մարմիններ:



1. Դո՛ւրս եկե՛ք բակ, դիտե՛ք ձեր շուրջը և գրառե՛ք, թե ինչ բույսեր են աճում:
2. Նայե՛ք նկարին, եկե՛ք ուսումնասիրենք բույսերի կառուցվածքը:



- Ինչի՞ համար են բույսի արմատները:
- Ինչե՞րն են օգնում բույսին օդից ու ջրից սնունդ ստանալ:
- Դու արդեն նախորդ դասերից գիտես կենդանի բնության բնորոշիչ հատկությունները: Հիշի՛ր:
- Ինչո՞վ են տարբերվում կենդանի բնության մարմինները անկենդան բնության մարմիններից:

Կենդանի բնության մարմինները **ծնվում են, սնվում են, բազմանում են, մահանում են:**



Տնային հանձնարարություն

- Հետաքրքրվի՛ր և գրանցի՛ր՝ ինչ դեղաբույսեր կան ձեր շրջապատում:
- Պատրաստի՛ր մի փոքրիկ դեղարկղիկ՝ դեղաբույսերով:

ԴԱՍ 5 - ԲՈՒՅՍԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ



1. Փորձե՛ք խմբավորել քարտերում պատկերված բույսերը:

- Ինչպե՞ս կատարեցիք, ի՞նչ հատկանիշներ հաշվի առաք:
- Ինչո՞վ էին դրանք նման:
- Ինչո՞վ էին տարբեր:



Բնության մեջ կան բազմազան բույսեր: Կան ծառեր, թփեր, խոտաբույսեր, ծաղկող և չծաղկող բույսեր:

Խոտաբույսերի ցողունը կարծ է, հյութալի, փափուկ:

Ծառերի ցողունը հաստ է, ամուր, կոչվում է բուն:

Թփերը ծառերից կարճ են, արմատից վեր են բարձրանում բազմաթիվ ճկուն, ոչ շատ բարձր, նույնպես փայտյա ցողուններ:

- Ծառերի ի՞նչ տեսակներ գիտեք:
- Գիտե՞ք՝ ինչպես են անվանում ծառածածկ տարածքները:
- Ի՞նչ կարելի է ստանալ ծառերից: Թվարկե՛ք:



2. Նայե՛ք նկարներին, նկարագրե՛ք ծառերը: Ինչպե՞ս կդասակարգեք:



3. Դու՛րս եկեք բակ, ուշադիր նայեք՝ ի՞նչ խոտաբույսեր կան:



Անտառներում, մարգագետիններում, դաշտերում աճում են բազմաթիվ բույսեր, որոնք կոչվում են **վայրի**, քանի որ դրանք մարդը չի աճեցրել: Մարդիկ օգտագործում են նաև բույսերի այլ մասերը և տարբեր իրեր են պատրաստում: Օրինակ՝ բամբակից հագուստ են պատրաստում, ծղոտից՝ գլխարկ, փայտից՝ կահույք, գիրք կամ երաժշտական գործիքներ և այլն:

Բույսերի մի մասն էլ մարդն է աճեցնում բանջարանոցներում, դաշտերում, այգիներում: Այդ բույսերն անվանում են մշակովի բույսեր:

- Կարո՞ղ ես թվել առարկաներ, որոնք բույսերից են պատրաստված:
- Ի՞նչ նպատակով է մարդն օգտագործում մշակովի բույսերը:



4. Ի՞նչ բանջարեղեն և մրգեր եք օգտագործում որպես սնունդ: Թվե՛ք:



- Գիտե՛ս դրանց օգտակարության մասին: Պատմի՛ր:
- Մրգերն ու բանջարեղենը կարող ենք համարել առողջ սնունդ: Ի՞նչո՞ւ:

Մարդիկ իրենց այգիներում, բանջարանոցներում մշակում են բույսերի շատ տեսակներ և օգտագործում են իրենց կենցաղում: Այդ **մշակովի բույսերը** շատ օգտակար են մարդու օրգանիզմի համար: Դու արդեն գիտես, որ դրանք պարունակում են անհրաժեշտ վիտամիններ:



5. Տանը կամ դասասենյակում ունե՞ք սենյակային բույսեր:



- Ի՞նչո՞ւ ենք սենյակում բույսեր պահում:
- Ինչպե՞ս խնամենք սենյակային բույսերը:
- Որպեսզի լավ աճեն, սենյակային բույսերին ի՞նչ է անհրաժեշտ:



Տնային հանձնարարություն

Տեսրում գրի՛ր այն սենյակային բույսերի անունները, որոնք աճում են ձեր տանը կամ դասասենյակում:

ԴԱՍ 6 - ՎԱՅՐԻ ԵՎ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

- Թվարկե՛ք ձեզ ծանոթ կենդանիներ:
- Ի՞նչ գիտեք դրանց մասին:



1. Նայե՛ք նկարներին, խմբավորե՛ք քարտերում պատկերված կենդանիները:





- Քանի՞ խումբ կազմեցիք:
- Ինչպե՞ս կվերնագրեք ձեր կազմած խմբերը:
- Ի՞նչ ընդհանուր հատկանիշներ կարող եք նշել ձեր կազմած խմբերում:
- Ի՞նչ տարբերություններ ունեն այդ խմբերի կենդանիները:



2. Մեկ անգամ ևս նայեք նկարները և տարբերակե՛ք ընտանի ու վայրի կենդանիները՝ աղյուսակում գրելով ձեզ հայտնի կենդանիների անունները:

Վայրի կենդանիներ	Ընտանի կենդանիներ



4. Չնայած վայրի և ընտանի կենդանիների տարբերություններին՝ կենդանիների խմբերը ունեն նաև ընդհանուր առանձնահատկություններ, որոնցով էլ տարբերվում են մյուս խմբերից:

Թռչուններ




- Ունեն փետուներ, կտուց, երկու թև:

Միջատներ



- Ունեն վեց ոտք, թևեր, շոշափուկներ, հաճախ՝ թևեր:

Ձկներ



- Ապրում են ջրում, ունեն թեփուկներ, լողակներ, շնչում են խոփկներով:

Կաթնասուններ



- Մարմինները ծածկված են մազերով, ծագերին կերակրում են կաթով:

Սողուններ



- Ունեն թեփուկավոր կամ ոսկրային պատյան, չորս ոտք կամ ոտք չունեն:

Երկկենցաղներ



- Ապրում են թե՛ ջրում, թե՛ ցամաքում:



Տնային հանձնարարություններ

1. Ընտրե՛ք որևէ ընտանի և վայրի կենդանի, նկարե՛ք աշխատանքային տետրում:

2. Նկարագրի՛ր՝ պատասխանելով հետևյալ հարցերին.

- Գրի՛ր անունը:
- Կենդանիների ո՞ր խմբին է պատկանում:
- Մարմնի ի՞նչ մասեր ունի:
- Որտե՞ղ է ապրում:
- Ինչպե՞ս է տեղաշարժվում:
- Ի՞նչ է տալիս այդ կենդանին մարդուն:
- Նկարի՛ր այդ կենդանուն աշխատանքային տետրում:

ԴԱՍ 7 – ԲՈՒՅՍԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՆՈՒՆԴ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ



- Ինչո՞ւ են սնվում մարդիկ և կենդանիները:
 - Որտեղի՞ց են մարդիկ և կենդանիները սնունդ ստանում:
1. Նայե՛ք նկարներին, փորձե՛ք գծով միացնել աջ և ձախ սյունակների նկարները՝ ցույց տալով՝ որն ինչ է ուտում:





2. Բույսերին նույնպես անհրաժեշտ է սնունդ:

- Ինչո՞վ է սնվում բույսը:
- Հիշենք բույսերի կառուցվածքը:
- Ինչի՞ համար են արմատները:
- Ինչի՞ համար է ցողունը:
- Իսկ տերևները ինչի՞ համար են:

Քանի որ բույսերը սնունդ են մարդկանց և կենդանիների համար, ուրեմն նախ պետք է իմանանք, թե ինչով են սնվում բույսերը:

Արմատները կլանում են ջուրը և ցողունի միջոցով փոխանցում են բույսի մյուս մասերին:

Տերևները կլանում են օդը և արևի լույսի ազդեցությամբ ստեղծում են սննդանյութ, որը դարձյալ ցողունի միջոցով փոխանցում են բույսի մյուս մասերին:

Սննդարար նյութեր ստեղծելու գործընթացում ամենակարևորը Արեգակի լույսն է :

3. Մենք արդեն գիտենք, որ բոլոր կենդանի մարմինները (օրգանիզմները) պետք է սնվեն ապրելու համար: Սնունդը պարունակում է նյութեր, որոնք օրգանիզմը ապահովում են էներգիայով:

Այն կենդանիները, որոնք սնվում են միայն բույսերով (կով, ոչխար, սկյուռ, մուկ) կոչվում են **բուսակեր** կենդանիներ:

Այն կենդանիները, որոնք սնվում են բուսակեր կենդանիներով (աղվես, գայլ, արծիվ, օձ) կոչվում են **գիշատիչներ**:

Կան նաև կենդանիներ, որոնք սնվում են սատկած կենդանիների դիակներով: Դրանց թվին են պատկանում որոշ կաթնասուններ, թռչուններ, միջատներ, որոնք համարվում են **բնության սանիտարներ**:



4. Հետևյալ նկարները դասակարգեք՝ առանձնացնելով բուսականներին և գիշատիչներին:



- Գիտե՞ք, որ մարդն **ամենակեր** է, սնվում է և՛ բույսերով, և՛ կենդանիներով:

- Գիտե՞ք, որ կան բույսեր, որոնք սնվում են կենդանիներով:
Օրինակ՝ ցողիկը, վեներայի մաշիկը:

Միջատակեր բույսեր





Տնային հանձնարարություն

Գրառե՛ք ձեր մեկ օրվա սնունդը և յուրաքանչյուրի դիմաց գրեք՝
բուսական է՞, թե կենդանական:

ԴԱՍ 8 - ԱՆԿԵՆԴԱՆ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԵՆԴԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

1. Նայե՛ք նկարներին, առանձնացրե՛ք միայն անկենդան բնություն պատկերող նկարները:



- Գիտե՛ք որտեղ են ապրում կենդանիները և բույսերը: Թվե՛ք:
- Ի՞նչ է անհրաժեշտ նրանց ապրելու համար:

2. Դո՛ւրս եկեք բակ, դիտումներ կատարեք և տետրում նշեք, թե անկենդան բնության մարմինները, որպես բնակության միջավայր, ինչպես են կապվում կենդանի բնության հետ:



3. Գծով միացրե՛ք աջ և ձախ սյունակների նկարները՝ գտնելով, թե որը ի՛նչ միջավայրում է ապրում:



4. Նայե՛ք նկարներին, որտե՛ղ են ապրում այս կենդանիները, ի՞նչ միջավայր է հատուկ այս կենդանիներին:



Բույսերը, կենդանիներն ու մարդը հարմարվում են Երկրագնդի տարբեր բնական պայմաններին ու տեղանքին: Հարմարվելով նրանք փոխում են իրենց սովորություններն ու կառուցվածքը: Պահպանվում է այն բույսը, կենդանին կամ մարդը, որն ավելի լավ է հարմարվում: Չորությանը չդիմացող բույսը չորանում է, սառնամանիքին չհարմարվողը՝ ոչնչանում:

Օրինակ՝ 1. Կակտուսի տերևները ձևափոխվել են փշերի, որոնցից ջուրն ավելի քիչ է գոլորշիանում:

2. Ցուրտ վայրերում կենդանիների թավ մուշտակը և մաշկի տակի ճարպի շերտն օգնում են պահպանելու մարմնի ջերմաստիճանը:



Կարո՞ղ եք ներկայացնել նման այլ օրինակներ:



Տնային հանձնարարություն

Ուշադիր զննիր շուրջդ, գրառի՛ր կենդանիներն ու բույսերը, որոնք ապրում կամ աճում են քո բնակավայրում:

Նկարի՛ր կենդանիներ և բույսեր համապատասխան միջավայրում:


ԴԱՍ 9 – ԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԻՋԱՎԱՅՐԸ



1. Նայե՛ք նկարները, և գրե՛ք այն կենդանիների ու բույսերի անունները, որոնք, ձեր կարծիքով, կարող են բնակվել տվյալ միջավայրում:



2. Նկարագրեք, թե որ օրգանիզմը ինչպես է հարմարվել տվյալ միջավայրին:





Տնային հանձնարարություն

Գրել կենդանիների անուններ՝ նշելով, թե որ միջավայրերում են ապրում:



Նշել, թե որ կենդանին ինչ
միջավայրում է ապրում:

ԴԱՍ 10 – ԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԼՈՒՅԹԸ



- Ի՞նչ է մակերևույթը:
- Ինչպիսի՞ն է Երկրի մակերևույթը:
- Ինչե՞ր կան Երկրի մակերևույթի վրա:

1.

Երկրի մակերևույթը բազմազան է՝ և՛ հարթ է, և՛ անհարթ:
Հարթ տարածքներն ավելի քիչ են, անհարթությունները զբաղեցնում են ավելի մեծ տարածքներ: Դրանք բլուրներն են, սարերը, ձորերը:
Երկրի մակերևույթի հիմնական ձևերը **հարթավայրերն ու լեռներն են:**
Երկրի մակերևույթը հարթությունների և անհարթությունների ամբողջություն է:

2. Նայե՛ք նկարները, նկարագրե՛ք հարթավայրերի և լեռների տարբերությունները:



1. Դո՛ւրս եկեք բակ, նայե՛ք շուրջը, փորձե՛ք նկարագրել ձեր տարածքի մակերևույթը:

- Ի՞նչ եք կարծում, Երկրի մակերևույթի վրա ամենուր բնությունը նո՞յնն է, թե փոխվո՞ւմ է:

2. Նայե՛ք նկարները, փորձե՛ք նկարագրել, թե որ տեղանքին ինչպիսի բնություն է բնորոշ, ինչ կենդանիներ են ապրում



3. Ջուրն էլ երկրի վրա տարբեր ձևերով է հանդիպում՝ գետեր, լճեր, ծովեր, աղբյուրներ, օվկիանոսներ: Տարբերակեք նկարներում պատկերվածը:





Տնային հանձնարարություն

Հետաքրքրվի՛ր, թե որ տեղանքին ինչպիսի բնություն է բնորոշ, ինչ կենդանիներ են ապրում: Գրառի՛ր տեսրում:

ԴԱՍ 11 – ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՄԻՍՆԵՐԸ

- Տարին քանի՞ եղանակ ունի: Թվե՛ք:
- Յուրաքանչյուր եղանակ քանի՞ ամիս ունի: Թվե՛ք:

1. Յուրաքանչյուր նկարի տակ գրե՛ք՝ տարվա որ եղանակն է:



- Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ են մարդիկ փորձում կանխատեսել եղանակը:
- Գիտե՞ք՝ ինչով են պայմանավորված բնության փոփոխությունները:

2.

Բնության մեջ կատարվող փոփոխությունները կախված են տարվա եղանակներից:
Եղանակից կախված՝ փոխվում է բնությունը, փոխվում է բնակավայրերի տեսքը:
Բույսերն ու կենդանիները հարմարվում են տարվա եղանակին: Մարդիկ նույնպես հարմարվում են՝ հարմարեցնելով իրենց հագուստը, տան ջերմությունը:



3. Խաղ՝ «Դասավորվի՛ր ըստ ամիսների»:

Տանձը, խնձորը, դեղձը, սալորը

Ասա՛ երբ է ծննդյանդ օրը:

Հունվար, փետրվար, մարտ, ապրիլ մայիս,

Հունիս, հուլիս, օգոստոս

Սեպտեմբեր, հոկտեմբեր

Նոյեմբեր, դեկտեմբեր:

- Թվի՛ր տարվա ամիսները հերթականությամբ:



Տնային հանձնարարություններ

- Տրված բառերով պատմի՛ր, թե եղանակն ինչպես է փոխվում գարնանը, ամռանը, աշնանը և ձմռանը. արևոտ, պայծառ, ամպամած, սառնամանիք, քամի, բողբոջ, անձրև, ծիածան, կանաչ, ձյուն, կարկուտ, շոգ, սառույց, ամպրոպ, կայծակ:
- Նայի՛ր տեսաֆիլմը՝ <https://www.youtube.com/watch?v=39kXIYVaLqw>

ԴԱՍ 12 – ԲՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գիտե՛ք՝ ինչպես է փոխվում բնությունը տարվա եղանակներին:
- Կարո՞ղ եք պատմել այդ փոփոխությունների մասին:
- Ի՞նչ է եղանակը:

1.

**Եղանակը օդի ջերմաստիճանն է, տեղումները և ամպամածությունը:
Եղանակի մասին իմանալն օգնում է պահպանելու առողջությունը,
խնամելու բույսերն ու կենդանիներին:**



2. Նայե՛ք նկարներին և նկարագրե՛ք, թե բնությունն ինչպե՞ս է փոխվում տարվա տարբեր եղանակներին:



- Ինչպե՞ս են մարդիկ հարմարվում շոգին, ցրտին, անձրևին:
- Ինչպե՞ս են կենդանիները հարմարվում տարվա տարբեր եղանակներին:

3. Լրացրե՛ք աղյուսակը. տարվա ո՞ր եղանակին ո՞ր աշխատանքներն ենք կատարում:

Հունձ, բերքահավաք, ծառատունկ, վար, ցանքս, ոռոգում, պահածոներ...

Գարուն	Ամառ	Աշուն	Ձմեռ



4. Տարվա յուրաքանչյուր եղանակի դիմաց գրե՛ք համապատասխան բառերն ու բառակապակցությունները՝ տերևաթափ, անձրև, բողբոջ, շոգ, ցուրտ, չու, ծաղիկ, արձակուրդ, թռչունների վերադարձ, տաք հագուստ, սառույց, հասունացած մրգեր:


Գարուն _____

Ամառ _____

Աշուն _____

Ձմեռ _____

5. Ներկիր ինքդ:



Տնային հանձնարարություն

- Պատմիր, թե ձեր տանը ինչպես եք դիմավորում տարվա տարբեր եղանակները, ինչ գործեր եք անում, որ եղանակին որ տոնը ինչպես եք նշում:
 - Քո սենյակի պատուհանից լուսանկարիր բացվող տեսարանը, հիշիր և այդ նույն տեսարանը նկարիր տարվա մյուս եղանակներին:
- Համեմատիր:
- Դիտիր տեսաֆիլմը՝

<https://www.youtube.com/watch?v=YM6nMQbcKEk>

ԴԱՍ 13 – ԲՆՈՒԹՅԱՆ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԴԵՐԸ ԴՐԱՆՈՒՄ

- Կարող եք թվել օրինակներ, որտեղ երևում է մարդու ազդեցությունը բնության վրա:



1. Խաղանք միասին - «Ինձ էլ տեղ տվեք»

- Փոխվե՛ց արդյոք կենդանիների վիճակը: Ինչպե՛ս:
- Ի՞նչ կպատահի շրջանագծից դուրս մնացածների հետ:
- Իսկ ի՞նչ կարելի է անել, որ մարդու գործունեությունը չազդի կենդանիների, բույսերի վրա:



2. Նայե՛ք նկարներին և դասակարգե՛ք երկու խմբի:



- Ինչպե՛ս դասակարգեցիք: Ինչո՞ւ:
- Ո՞ր խումբը ձեզ դուր եկավ: Ինչո՞ւ:
- Ի՞նչ կարող է լինել, երբ մարդը բացասաբար է ազդում բնության վրա:
- Նայե՛ք ձեր շուրջը և թվարկե՛ք բնության վրա մարդու ազդեցության օրինակներ:



3. Նայե՛ք նկարներին, ի՞նչ եք տեսնում, ի՞նչ դեր ունի մարդը:



4. Աշխատելով զույգերով՝ վերափոխե՛ք այս նկարներն այնպես, ինչպես դուք կցանկանայիք տեսնել: Ձեր աշխատանքները փակցրե՛ք պաստառին:



Տնային հանձնարարություն

- Շարունակի՛ր մտածել՝ ինչպես խնայողաբար վերաբերվել բնությանը:
- Մտքերդ պատմիր ընկերներիդ:
- Հետաքրքրվի՛ր և գրիր, թե ձեր տարածքում ինչ բույսեր կամ կենդանիներ կան վտանգված, որոնք ընդգրկված են Կարմիր գրքում:

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ
2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
ԹԵՄԱ 7 – ՀՐԵԼ ԵՎ ՁԳԵԼ
Աշակերտի ուսումնական նյութ

© Լուսինե Ալեքսանյան

ԹԵՄԱ 7 – ՀՐԵԼ ԵՎ ՁԳԵԼ

ԴԱՍ 1 – ՇԱՐԺՎՈՒՄ ԵՆՔ,

ՇԱՐԺՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ



- Ինչպե՞ս են շարժվում իրերը: Օրինակ՝ հիմա այս գիրքը, որ կարդում եք, հավանաբար դրված է սեղանին և անշարժ է: Ինչպե՞ս այն կշարժեք: Ցո՛ւյց տվեք...

Գիտե՞ք, որ ոչինչ այս աշխարհում ինքնիրեն չի շարժվում, եթե շարժվում է, ուրեմն կա մի ուժ, որը ստիպում է նրան շարժվել:

Մեր շրջապատում կան իրեր, առարկաներ և օբյեկտներ, որոնք շարժվում են, տեղափոխվում: Կան այնպիսիները, որոնց շարժումը չենք տեսնում, միշտ նույն տեղում են:



- Կարո՞ղ եք օրինակներ բերել, նշել դրանցից մի քանիսը, թե որոնք են շարժվում, տեղափոխվում, և որոնք են անշարժ՝ միշտ նույն տեղում:
- Իսկ կա՞ն անշարժ իրեր, առարկաներ, որոնք կարելի է շարժել, տեղափոխել: Օրինակներ բերեք:

1. Խաղահրապարակում բոլորը շարժվում են



Երեխաները խաղում են: Շարժվում են, քայլում, վազում, սահում, մագլցում, սողում, իջնում, բարձրանում, ցատկում, թռչկոտում, ճոճվում, պտտվում: Ինչպե՞ս են շարժվում նկարների երեխաները, նկարագրե՛ք:

2.



- **Ինչպե՞ս կարող եք ֆուտբոլի գնդակը տեղաշարժել:**

Դուք կարող եք գնդակը հրել՝ հարվածելով դրան: Եթե ավելի ուժեղ հարվածեք գնդակին, գնդակն ավելի արագ կընթանա ու ավելի հեռուն կտեղափոխվի:

- **Ինչպե՞ս կարող եք սայլակը տեղաշարժել:**

Կարող եք սայլակի բռնակից քաշել, կարող եք նաև հրել: Եթե ավելի ուժով քաշեք կամ հրեք, այն ավելի արագ ու ավելի հեռու կտեղափոխվի:

3. Արմենը ոտքով հարվածեց գնդակին:



Այն շատ հեռու չգնաց:

Իսկ Կարենի հարվածելուց գնդակը շատ հեռուն գնաց: Ի՞նչ եք կարծում, ինչու՞, ո՞րն էր գնդակի ավելի հեռու գլորվելու պատճառը:



4. Հիմա դիտենք ֆիլմը՝ «Ուժ և շարժում»:

<https://www.youtube.com/watch?v=rfeVINL7d9U> (6.20 րոպե)



5. Նայե՛ք նկարներին և որոշե՛ք.

Մեկը հրում է, մյուսը՝ ձգում, քաշում:

Նշի՛ր, հրում է, թե՛ ձգում, քաշում:



1



2



3



4



5



6



7



8



9



6. Խմբով քննարկե՛ք և մեկնաբանե՛ք.

- Նայեք 9-րդ նկարին, ի՞նչ եք կարծում, ո՞վ է ուժեղ: Ի՞նչո՞ւ:



7. Հիմա կդիտենք «Պապն ու շաղգամը» մուլտֆիլմը:
<https://www.youtube.com/watch?v=ZMFMZ92tXjQ> (2.37 րոպե)

Հիշենք, թե ինչ բառեր գործածեցինք:

Շարժվել, շարժում, ուժ, տեղափոխվել, անշարժ,
քայլել, վազել, սահել, մագլցել, սողալ, իջնել, բարձրանալ, ցատկել, թռչկոտել,
ճոճվել, պտտվել, հրել, ձգել, քաշել:



Տնային առաջադրանք

Դուք ամեն օր իրեր եք հրում և քաշում, տեղաշարժելու համար: Նշեք հինգ իր, որոնք հրում եք և հինգ իր, որոնք քաշում եք:

Հրում եմ

Քաշում եմ

ԴԱՍ 2 – Ուժեղ ՀՐԻՐ, ԹՈՒՅԼ ՁԳԻՐ



1. Լսե՛ք պատմությունը

Արևոտ, տաք օր էր: Երեխաները դուրս էին եկել ուսուցչի հետ զբոսնելու: Նրանք սիրում էին միասին ժամանակ անցկացնել, զվարճանալ: Զբոսայգում կարուսել կար, երեխաները վազեցին ու ցատկեցին կարուսելի վրա՝ կարծելով, թե անմիջապես կսկսի պտտվել, բայց այն անշարժ էր:

- Տիկին Անահիտ, կարուսելը փչացել է, չի պտտվում,- բողոքեց Հրանտը:

Տիկին Անահիտը ժպտաց.

- Չի փչացել, պարզապես պետք հրենք, որ աշխատի:

Տիկին Անահիտն էլ ցատկեց կարուսելի վրա և սկսեց ուժեղ հրել: Կարուսելը սկսեց պտտվել, սկզբում՝ դանդաղ, բայց որքան ավելի ուժեղ էր հրում տիկին Անահիտը, այնքան կարուսելն արագ էր պտտվում:

- Հապա օգնեք ինձ, երեխանե՛ր,- խնդրեց տիկին Անահիտը, և երեխաները սկսեցին հրելով օգնել նրան: Կարուսելը սկսեց շատ արագ պտտվել:

- Վա՛յ, գլուխս պտտվեց, մի քիչ դանդաղեցրե՛ք,- խնդրեց Մարինեն, և տիկին Անահիտը դեպի իրեն քաշեց բռնակը: Կարուսելի պտտվելու արագությունը քիչ-քիչ դանդաղեց և աստիճանաբար կանգ առավ:

Այդ ժամանակ տիկին Անահիտն սկսեց հրել հակառակ ուղղությամբ, և կարուսելն այս անգամ սկսեց հակառակ պտտվել: Երեխաները կրկին փորձեցին հրել ու արագությունը մեծացնել, մինչև Մարինեն կրկին բղավեց, որ գլուխը պտտվում է: Տիկին Անահիտը նորից իրեն ձգեց բռնակը, և կարուսելը սկսեց քիչ քիչ դանդաղել ու կանգ առավ:

- Ոչինչ, Մարինե ջան, այս անգամ գլուխդ հակառակ պտտվեց, տեղաշարժված բաները էլի իրենց տեղը կընկնեն,- ասաց Արամը, ու բոլորը ծիծաղեցին, իսկ ամենաբարձրը Մարինեն էր ծիծաղում:

2. Եթե ուշադիր եք լսել, հեշտությամբ կպատասխանեք հարցերին:

- Ի՞նչ պատահեց, երբ երեխաները ցատկեցին կարուսելի վրա:

☐ Այն արագ շարժվեց:

☐ Այն դանդաղ շարժվեց:

☐ Այն չշարժվեց:

- Ինչպե՞ս տիկին Անահիտը ուրախացրեց երեխաներին:

☐ Նա հրեց կարուսելը:


☐ Նա փչեց դրա վրա:

- Նա կտորեց այն:
- Ի՞նչ տեղի ունեցավ, երբ տիկին Անահիտը ավելի մեծ ուժով հրեց կարուսելը:
 - Սկսեց արագ պտտվել:
 - Այն դանդաղեց:
 - Կանգնեց:
- Ինչպե՞ս տիկին Անահիտը քիչ-քիչ դանդաղեցրեց կարուսելը:
 - Նա հրեց այն:
 - Նա քաշեց այն:
 - Նա այրեց այն:
- Ինչպե՞ս տիկին Անահիտը փոխեց կարուսելի պտտվելու ուղղությունը:
 - Նա հրեց այն հակառակ ուղղությամբ:
 - Նա քաշեց այն հակառակ ուղղությամբ:
 - Նա քաշեց այն դեպի իրեն:



**Հիշենք, թե ինչ բառեր
գործածեցինք.**
Ուժեղ
Թույլ
Ուղղություն
Դանդաղ
Արագ
Արագություն
Պտտվելու արագություն
Դանդաղել
Արագանալ
Հակառակ ուղղություն

3. Դուք ամեն օր զանազան իրեր եք հրում և քաշում՝ դրանք տեղափոխելու, տեղաշարժելու համար: Ընդգծե՛ք, թե նկարներում պատկերված զույգ իրերից որը տեղաշարժելու համար է ավելի մեծ ուժ պետք: Ինչո՞ւ:



4. Հիմա մտածեք միասին այս հարցերի շուրջ և պատասխանները գտնելուց հետո ներկայացրեք մյուսներին:

- Կարո՞ղ եք ասել, ո՞րն է հրելու և քաշելու կամ ձգելու տարբերությունը:
- Երբ հրում ենք որևէ իր, հեռացնում ենք մեզնից, թե՞ մոտեցնում:
- Իսկ երբ քաշում ենք, կամ ձգում:



Հրելու և քաշելու տարբերությունը ուժը գործադրելու ուղղությունն է: Երբ որևէ իր հրում ենք, այն հեռացնում ենք մեզանից, իսկ երբ քաշում ենք կամ ձգում, այն մոտեցնում ենք մեզ:



5. Դուրս եկեք բաց տարածք, բաժանվե՛ք երկու խմբի:

- Խմբերը պետք է հեռանան իրարից մոտ 10-15 մետր քայլի չափով, շարվեն կողք կողքի, շրջվեն իրար դեմքով և բոլորը միասին, հնարավորինս արագ, առանց շարժման ուղղությունը փոխելու, շարժվեն միմյանց ուղղությամբ, այնպես, որ արագությամբ ամեն խումբ գրավի մյուս խմբի տեղը:
— Ի՞նչ եղավ, ստացվե՞ց, ի՞նչը խանգարեց, ինչու՞:



6. Մտածե՛ք. բացի իրերը տեղափոխելուց, էլ ինչի՞ համար ենք կիրառում հրելը կամ ձգելը, քաշելը:

- Ինչպե՞ս են մայրիկները կամ տատիկները խմոր հունցում: Ի՞նչ ուժ են օգտագործում:
- Փորձեք ինքներդ խմոր հունցել կամ պլաստիլինով ինչ-որ առարկա սարքել:



Դիտեք ֆիլմը և համոզվեք...

<https://www.youtube.com/watch?v=zl-vmLrBQzU> (5.12րոպե)

Իրերը հրելուց և ձգելուց կարող են նաև փոխել իրենց ձևը, սեղմվել կամ ձգվել, կարող են և կոտրվել, կտրվել, պոկվել:



Տնային առաջադրանք

Մայրիկին խնդրեք, որ ձեզ խմոր պատրաստելու պարագաներ տա, փորձեք պինդ խմոր հունցել և բարակ շերտով բացել:

- Ի՞նչ պետք կգա ձեզ:
- Ինչպե՞ս հունցեցիք, ի՞նչ ուժ կիրառեցիք հունցելիս և բացելիս:
- Ինչպես կամ ինչո՞վ բացեցիք խմորը:

Գնահատման վարժություններ.

1. Արմենը ոտքով հարվածեց գնդակին:



Այն շատ հեռու չգնաց: Արմենը ստիպված էր ավելի մեծ ի՞նչ օգտագործել, որպեսզի գնդակն ավելի հեռու տեղափոխվեր:

- ☐ գնդակ
- ☐ կոշիկ
- ☐ ուժ

2. Սուրենը գնում է սահնակով սահելու:



Ինչպե՞ս է Սուրենը տեղափոխում իր սահնակը.

- ☐ հրում է
- ☐ ձգում է

3. Սոնան հրում էր Աննայի ճոճանակը:



Սկզբում Սոնան թույլ էր հրում, հետո ավելի ուժեղ հրեց: Ի՞նչ կկատարվի:

- ☐ Աննան ավելի արագ կճոճվի:
- ☐ Աննան ավելի դանդաղ կճոճվի:

4. Հրու՞մ ես, թե ձգու՞մ: 2Ճ.Տ.Շ.ՈՒ1ա (միջին, գիտելիք, հմտություն)

- Ուզում ես բացել խոհանոցի դարակը... _____
- Ուզում ես փակել դարակը... _____
- Երբ ուզում ես հողից հանել շաղգամը... _____
- Երբ ուզում ես ընկերոջդ նետել գնդակը... _____
- Երբ ուզում ես տեղից շարժել ծանր քարը... _____
- Երբ ուզում ես օգնել փոսն ընկած ընկերոջդ... _____
- Երբ ճոճում ես ճոճանակին նստած ընկերոջդ... _____

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ
2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
ԹԵՄԱ 8 – ՁԱՅՆ ԵՎ ԼՈՒՅՍ
Աշակերտի ուսումնական նյութ

© **Լուսինե Ալեքսանյան**

ԹԵՄԱ 8 – ՁԱՅՆ ԵՎ ԼՈՒՅՍ

ԴԱՍ 1 – ՈՐՏԵՂԻՑ ԵՆ ԳԱԼԻՍ ՁԱՅՆԵՐԸ



1. Եկեք հիշենք մեր զգայարանները:

- Որո՞նք են դրանք: Հիշե՛ք, ինչո՞վ ենք լսում:

2. Եկեք դուրս գանք բակ և լսենք մեր շրջապատում լսվող ձայները:

- Ի՞նչ ձայներ ենք լսում:
- Ի՞նչը կարող է ձայն հանել:
- Իսկ մենք կարո՞ղ ենք ձայներ հանել: Ինչպիսի՞:
- Կա՞ն ձայներ, որոնք լսում ենք, բայց չգիտենք, թե որտեղից են գալիս:
- Որտեղի՞ց են գալիս ձայները: Ո՞ր իրերն ու առարկաներն են ձայներ հանում:
- Իսկ սեղանը կամ քանոնը կարո՞ղ են ձայն հանել:

3. Ինչ ձայներ են հանում նկարում պատկերված կենդանիները, փորձե՛ք նմանակել նրանց:





4. Եկեք կռահենք՝ ի՞նչ ծայն ենք լսում...

Այն իրերն ու առարկաները, որոնք ծայն են հանում, կոչվում են ծայնի աղբյուրներ: Ձայները, որոնք մենք լսում ենք, օգնում են մեզ հասկանալու, թե ինչ է կատարվում մեր շուրջը: Անգամ, եթե մենք չենք տեսնում ծայնի աղբյուրը, բայց լսում ենք ծայնը, դրանք մեզ օգնում են կողմնորոշվելու շրջապատում, օրինակ՝ հեռախոսի ծայնը, մեքենաների ծայնը, անձրևի ծայնը, ինքնաթիռի ծայնը, ամպրոպի ծայնը և այլն:



5. Նայե՛ք նկարներին և կռահեք, թե ինչ ծայներ կարող են լսվել պատկերված նկարներում:

- Աշխատեք խմբով և որոշեք, թե քանի ծայնի աղբյուր կարող եք տեսնել նկարում:
- Ո՞ր ծայներն են ցածր, որոնք՝ բարձր: Որո՞նք են հաճելի, որոնք՝ տհաճ:
- Կա՞ն ծայներ, որոնք լսում ենք, բայց ծայնի աղբյուրները չենք տեսնում:
- Ե՞րբ ենք ասում, որ աղմուկ է: Եվ ե՞րբ ենք համարում, որ խաղաղ է և ոչ աղմկոտ:

1.



2.



3.



4.



5.



6. Վերցնենք մի զանգ և գոնգ:

- Ի՞նչ եք կարծում, դրանք ծայնի աղբյու՞ր են, թե ոչ:
- Իսկ այս նկարում նրանք ծայն հանու՞մ են, թե՞ ոչ:
- Ի՞նչ է հարկավոր անել, որ նրանք ծայն հանեն:



Ձանգն ու գոնգը պետք է շարժել՝ հարվածելով կամ թափահարելով, որպեսզի նրանք սկսեն տատանվել: Տատանվելիս դրանք սկսում են ծայն հանել: Շարժվելով դրանք տատանում են օդը, ինչի հետևանքով էլ առաջանում են ծայները:

Ի՞նքո՞ւ փորձիր:

Տատանի՛ր զանգը կամ որևէ այլ իր, փորձի՛ր ուժեղ թափահարել և լսել արձակած ծայնը: Կամ հարվածիր որևէ իրի, որը կսկսի տատանվել և ծայն հանել:

Օրինակ՝ փորձի՛ր տատանել որևէ ձգած լար, թուղթ, հովհար: Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս են ծայն հանում երաժշտական գործիքները, օրինակ՝ կիթառը, ջութակը...



5. Եկեք խաղ խաղանք:

Բաց տարածքում կանգնեք տարբեր հեռավորության վրա և միմյանց հրահանգներ տվեք՝ մե՛կ շատ ցածր ծայնով, մե՛կ միջին բարձրության ծայնով, մե՛կ շատ բարձր բղավելով:

- Նշումներ կատարեք, թե ովքեր լսեցին, ովքեր՝ ոչ, ովքեր լավ չլսեցին, բայց ինչ-որ բան լսեցին:
- Ինչ եք կարծում, ինչու՞: Բացատրե՛ք:



Տնային հանձնարարություն

Նույն չափի բաժակներ վերցրեք և մեջը տարբեր քանակությամբ ջուր լցրեք: Գդալով կամ փայտիկով հերթով թույլ հարվածեք բաժակներին: Նկարագրեք, թե ինչ եղավ, ինչ ձայներ հանեցին բաժակները:



ԴԱՍ 2 – ԼՈՒՅՍ ԵՎ ՄԹՈՒԹՅՈՒՆ



1 .

- Ինչպե՞ս ենք տեսնում մեզ շրջապատող իրերը:
- Մութ սենյակում կարո՞ղ ենք տեսնել շրջապատող իրերը:
- Ի՞նչ պետք է անենք, երբ մտնում ենք մութ ջրամուտք:
- Իսկ ինչպե՞ս են մարդիկ կողմնորոշվել հնում մթության մեջ, երբ փողոցները և տները չէին լուսավորվում:



2. Եկեք փորձ անենք:



Մարիամը ուզում էր հասկանալ, թե ինչ կա տուփի մեջ:
Եկեք մենք էլ փորձենք:

Ի՞նչ արեց Մարիամը:
Իսկ դու՞ք:
Ի՞նչ կատարվեց, նկարագրե՛ք:





3. Ինչի՞ շնորհիվ է լուսավորվում մեր շրջապատը՝ ցերեկը, գիշերը, փակ տարածքում:

- Մտածե՛ք և նկարեք այն ամենը, ինչը լույս է տալիս, դիմացը գրեք, թե որտեղ և երբ ենք օգտվում դրանից:
- Փորձե՛ք կռահել, թե դրանցից որոնք են լույսի բնական աղբյուրներ, որոնք՝ արհեստական, եթե բնական աղբյուրները լույս են ավիս անկախ մեր կամքից և անհրաժեշտությունից, իսկ արհեստական աղբյուրները լույս են տալիս, երբ դա պետք է մարդկանց:

Այն մարմինները, որոնք լույս են արձակում, կոչվում են լույսի աղբյուրներ:
Արևը, էլեկտրական լամպը, մոմը, հեռուստացույցը, բոլորը լույս են տալիս՝
լուսարձակում են: Դրանց մի մասը բնական լույսի աղբյուր է, մի մասը՝
արհեստական: Արևը ամենագլխավոր լույսի բնական աղբյուրն է, առանց որի
Երկրի վրա կյանք չէր լինի:

4. Կռահեք և նշե՛ք, թե որն է լույսի բնական աղբյուր, որը՝ ոչ: Բացատրե՛ք, ինչու՛:



- Արևը, կայծակը, աստղերը, լուսատուիկը և լույս արձակող մի քանի այլ կենդանիներ համարվում են լույսի բնական աղբյուրներ:
- Լապտերը, մոմը, էլեկտրական լամպը, կրակը համարվում են լույսի արհեստական աղբյուրներ:



Տնային հանձնարարություն

Նկարիր քո սենյակը, երբ ցերեկային լույսը լուսավորում է այն, և նկարի՛ր, երբ մութ է և լույսը չես վառել:

Ուշադրություն դարձրու՝ ինչ գույներ կօգտագործես:

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ
2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
ԹԵՄԱ 9 – ԻՆՉՆ ԻՆՉԻՑ Է ՊԱՏՐԱՍՏՎԱԾ
Աշակերտի ուսումնական նյութ

© **Լուսինե Ալեքսանյան**

ԹԵՄԱ 9 – ԻՆՉՆ ԻՆՉԻՑ Է ՊԱՏՐԱՍՏՎԱԾ

ԴԱՍ 1 – ՄԵՐ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԻՐԵՐԸ

1. Դուրս եկեք բաց տարածք և հետազոտեք ձեզ շրջապատող իրերն ու առարկաները:



2. Ի՞նչ եք տեսնում ձեր շուրջը, թվարկեք:
3. Ի՞նչն ինչից է կազմված կամ պատրաստված:



Բոլոր մարմինները, անկախ իրենց տեսակից, կազմված են նյութից: Նյութն այն է, ինչից կազմված են մարմինները: Մեր շրջապատում առավել հաճախ հանդիպում են փայտից, ապակուց, քարից, մետաղից, պլաստիկից, ռեզինից, թղթից և գործվածքից պատրաստված իրեր: Աթոռը մարմին է, այն կազմված է փայտից: Գնդակը մարմին է, այն կազմված է ռետինից:

Տնային



հանձնարարություն

Շրջի՛ր տանը և լրացրու հետևյալ աղյուսակը. ձեր տան իրերից, որն ինչից է պատրաստված:

քարից	փայտից	մետաղից	ապակուց	թղթից	պլաստիկից	ռեզինից	գործվածքից

- **Ովքեր են, ըստ քեզ, դրանք պատրաստել:**

ԴԱՍ 2 – ԻՆՉԻՑ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ



1. Փորձի՛ր կռահել, թե ինչն ինչից է պատրաստված:




2.

- Ի՞նչ է սեղանը: Ինչից է այն պատրաստված:
- Ինչի՞ց են ստանում փայտը: Ի՞նչ է փայտը:

Մեր շրջապատում եղած բոլոր մարմինները կազմված են նյութերից: Օրինակ՝ աթոռը մարմին է, իսկ նյութը, որից այն պատրաստված է, փայտն է: Նյութերը լինում են բնական և արհեստական՝ մարդու ստեղծած: Բնության մեջ հանդիպող նյութերը համարվում են բնական նյութեր, օրինակ՝ քարը, ավազը, փայտը, բամբակը բնական նյութեր են, իսկ դրանցից պատրաստված իրերը՝ բնական նյութերից պատրաստված: Իսկ այն նյութերը, որոնք մարդն է ստանում, օրինակ՝ պլաստմասը, կոչվում են արհեստական նյութեր:

3.

- Տարբերակել բնական և արհեստական նյութերը և դրանցից պատրաստված իրերը:



4. Փոխադարձաբար ստուգեք՝ միմյանց հետ քննարկելով և հիմնավորելով ձեր տեսակետները:



Դիտեք ֆիլմը՝

<https://www.youtube.com/watch?v=0yKoHAWVhuE>



Տնային հանձնարարություն

Տանը գտիր առարկաներ, որոնք պատրաստված են մի քանի նյութերից և նկարագրիր: Օրինակ՝ մկրատի պոչը պլաստմասից է պատրաստված, իսկ մկրատը՝ մետաղից:

Նկարագրելիս օգտագործի՛ր բնական և արհեստական բառերը:


ԴԱՍ 3 – ԻՆՉՊԻՍԻՆ ԵՆ ՄԵՋ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԻՐԵՐԸ



1.

- Ի՞նչ եք կարծում, կարո՞ղ են նույն առարկաները պատրաստվել տարբեր նյութերից: Օրինակ՝ աթոռը միայն փայտի՞ց կարող է լինել, թե՛ այլ նյութերից էլ կարելի է աթոռ պատրաստել: Բերե՛ք օրինակներ:
- Թվարկե՛ք նման օրինակներ, երբ նույն իրը կարելի է պատրաստել տարբեր նյութերից:

2. Կարո՞ղ եք նկարել (կամ ծեփել) նույն առարկան՝ պատրաստված տարբեր նյութերից, կամ տարբեր առարկաներ՝ պատրաստված նույն նյութից:



3. Պարկից հանի՛ր:

Ձեռքդ մտցրու, բռնիր մեկ իր և նկարագրի՛ր, ինչպիսին է...



Տնային հանձնարարություն

Կազմիր նոր բառակապակցություններ *փափուկ, սեղմվող, ձգվող, կոշտ, անհարթ, ամուր, կարծր, պինդ, անհարթ, հարթ, ողորկ, փշուր, ծակծկող, թավշյա* բառերով:

ԴԱՍ 4 – ԻՆՉՊԻՍԻՆ ԵՆ ՄԵՋ ՇՐՋԱՊԱՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ



- Ինչե՞ր են պատկերված նկարում:
- Նկարագրե՞ք յուրաքանչյուր նկարում պատկերված իրերը:



- Ինչու՞ ենք տեսնելով իմանում, որ մեկի մեջ լցված բան կա, մյուսի մեջ՝ ոչ, իսկ մեկի մեջ էլ տեսնելով չենք իմանում, լիքն է, թե դատարկ: Մարմինների ո՞ր հատկությունների շնորհիվ ենք դա իմանում:
- Իսկ պատկերված դատարկ շշերի մեջ է՞լ ինչ կարող ենք լցնել: Թվարկե՛ք:

- Միայն ինչպիսի՞ նյութերով կարող ենք լցնել շշերը:
- Ձեր թվարկած նյութերն ինչո՞վ են միմյանց նման, ի՞նչ ընդհանուր հատկություն ունեն:
- Ինչպե՞ս են անվանում այդ նյութերը՝ ըստ իրենց վիճակի:



Փորձ ենք անում

1. Խմբվե՛ք, վերցրեք մեկանգամյա բաժակներ և ափսեներ, անձեռոցիկներ և կատարեք ձեր խմբին տրված ցուցումները:



1-ին խումբ

Ստացած նյութերը պետք է լցնեք շշերի մեջ:

Ջուր, ավազ, քար

Նկարագրե՛ք, ինչ արեցիք և ինչ եղավ:

2-րդ խումբ

Ստացած նյութերը պետք է լցնեք ափսեի մեջ:

Բուսայուղ, ավազ, շաքար, քար

Նկարագրե՛ք, ինչ արեցիք և ինչ եղավ:

3-րդ խումբ

Ստացած նյութերը պետք է լցնեք ափսեի մեջ, հետո ափսեից լցնեք շշերի մեջ:

Մեղր, աղ, ջուր

Նկարագրե՛ք, ինչ արեցիք և ինչ եղավ:

4-րդ խումբ

Ստացած նյութերը պետք է լցնեք շշերի մեջ, հետո ավսեի մեջ:

Ավազ, աղ, քուսայուղ

Նկարագրե՛ք, ինչ արեցիք և ինչ եղավ:

ԴԱՍ 5-6 – ԻՆՉՊԻՍԻՆ ԵՆ ՄԵՋ ՇՐՋԱՊԱՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ



1.

- Ինչո՞վ են լցված այս շշերը:



- Վստա՞հ եք, որ դրանք դատարկ են:

2. Վերցրե՛ք տետրը և թափահարեք դեմքից քիչ հեռու: Ի՞նչ զգացիք, ի՞նչն էր շարժում ձեր մազերը ու դիպչում ձեր դեմքին:

- Դուք առաջացրիք արհեստական քամի:
- Իսկ բնական քամիների ժամանակ ի՞նչն է շարժվում և հաճախ՝ շատ ուժգին:





Օդը շարժվում է

- Երբ մենք շնչում ենք, ի՞նչն ենք քթով կամ բերանով ներքաշում մեր թոքերը:
- Ի՞նչ եք կարծում, օդը տեղ գրավում է:



Փորձ ենք անում

1. Վերցրեք ջրով լի թափանցիկ թաս, հետո մեկ թափանցիկ բաժակ, ապա շրջած, ուղիղ պահած իջեցրեք թասի մեջ և փորձեք ընկղմել: Բայց պետք է շատ ուշադիր լինեք, որ չթեքեք բաժակը:
 - **Ի՞նչ եք տեսնում**
2. Հիմա նույնը փորձեք՝ ընկղմելուց հետո մի փոքր թեքելով բաժակը:
 - **Հիմա՞ ինչ տեսաք, նկարագրեք:**



Օդը տեղ է գրավում

Վերևում նկարված շերտը բոլորը լցված են օդով: Քանի դեռ օդը դուրս չի եկել, նրա մեջ ուրիշ ոչինչ չենք կարող լցնել... Եկեք փորձենք:

3. Վերցնենք օդով լցված շիշ և բերանին ամրացնենք ձագար: Ձագարի բերնի շուրջը բամբակ փաթաթենք, որ այն կիպ հագնի շիշ բերանին: Ձագարի մեջ լցնենք մեկ բաժակ ջուր: Ի՞նչ եք տեսնում: Այո, ջուրը չի լցվում շիշ մեջ այլ մնում է ձագարի մեջ, քանի դեռ օդը շիշից դուրս չի եկել: Հենց թուլացնում ենք ձագարի շիշն հագցրած մասը՝ ջուրը սկսում է լցվել, որովհետև այդ անցքից դուրս է գալիս նաև շշում եղած օդը:

- Էլ ի՞նչ հատկություններ կարող ենք ասել օդի վերաբերյալ: Ինչու՞ չէինք տեսնում մինչև փորձերը, որ օդը տեղ է գրավում: Ինչու՞ չէինք կռահում, որ շները դատարկ են:

Օդը թափանցիկ է, անհոտ և անհամ:

4. Հիմա մի քանի փորձ կանենք ջրի հետ:
Վերցրեք բաժակով ջուր, ապա մեջը լցրեք մի գդալ շաքարավազ: Խառնեք... Տեսնու՞մ եք շաքարավազը, ու՞ր կորավ:
Փորձեք համը, ջուրը քաղցրացել է, ուրեմն շաքարավազը չի անհետացել, այլ շատ մանր մասնիկների է բաժանվել և չի երևում, բայց ջուրը քաղցրացել է:
Շաքարը լուծվել է ջրում:
5. Նույնը փորձենք աղի հետ: Կհամոզվենք, որ աղը նույնպես լուծվում է ջրում:
6. Նույնը փորձենք ավազով, քարով, փայտով և բամբակով:
7. Նույնը փորձենք բուսալուղով:
8. Գրանցեք բոլոր փորձերի ժամանակ ձեր դիտարկումները:

Ջուրը անգույն, անհամ, անհոտ նյութ է, որի մեջ կարող են լուծվել շատ նյութեր, բայց ոչ բոլոր նյութերն են լուծվում ջրում, օրինակ՝ քարը, ավազը, փայտը, յուղերը չեն լուծվում:

Մեզ շրջապատող նյութերը լինում են երեք վիճակում: Հեղուկ՝ ինչպես ջուրը, բուսալուղը, մեղրը և այլն: Պինդ՝ ինչպես քարը, շաքարը, փայտը, աղը, ապակին, պլաստմաս և այլն: Գազային՝ ինչպես օդը, գազօջախի գազը և այլն:



1. Համեմատեք ջուրը, բուսալուղը և մեղրը: Ինչո՞վ են նման, ինչո՞վ են տարբեր
2. Համեմատեք քարը, ավազը, աղը, շաքարը և փայտը: Ինչո՞վ են նման, ինչո՞վ են տարբեր:
3. Համեմատեք ջուրը, օդը և ապակին: Ինչո՞վ են նման, ինչո՞վ՝ տարբեր:



Դիտենք երկու շատ հետաքրքրաշարժ փորձեր:

<https://www.pinterest.ru/pin/632052128944359921/>

<https://www.pinterest.ru/pin/64880050870357176/>



Տնային հանձնարարություն

Եթե ուզեք, կարող եք նույն փորձերը կատարել տանը և նկարահանել:

ԴԱՍ 7 – ՄԵԾ-ՓՈՔՐ, ՇԱՏ-ՔԻՉ, ԲԱՐՁՐ-ՑԱԾՐ, ՀԵՌՈՒՄՈՏԻԿ...



1.

- Մեր շուրջն եղած իրերն ու մարմինները լինում են տարբեր չափերի: Դրանք նկարագրելիս կարևոր է նաև նշել դրանց չափերը:


Որքա՞ն են կշռում: Հասակդ կասե՛ս: Դրսում ցու՛րտ է, թե տաք: Ժամը քանի՞սն է: Դու՛ ես մեծ, թե՛ քույրդ: Ձեր տունը դպրոցից շա՛տ է հեռու:

Ի՞նչ չափսի կոշիկ ես հագնում: Պայուսակդ ծա՛նր է, թե թեթև:

Սրանք հարցեր են, որոնց հաճախ պետք է շատ հստակ պատասխան տալ, բայց երբեմն կարող ես մոտավոր պատասխան տալ: Տարբեր մեծություններ տարբեր կերպ ու գործիքներով են չափվում:

Իսկ ի՞նչ գործիքներ գիտեք դուք, որոնցով չափվում են տարբեր մեծություններ:


2. Ճանաչու՛մ եք այս գործիքները: Նշեք, թե որ գործիքով ինչն են չափում:



3. Հեղուկները չափվում են լիտրերով, գնումներ կատարելիս ուշադրություն դարձրե՛լ եք, թե ինչ է գրված շշերի վրա:



4. Ո՞ր տարան ավելի շատ հեղուկ կտանի: Իսկ կարո՞ղ եք այնպես ներկել, որ փոքր տարայում ավելի շատ հեղուկ լինի լցված, քան մեծ տարայում:



5. Իսկ հիմա եկեք գնումներ կատարենք:

Պետք է գնեք հաց, կաթ, միրգ, հյութ, պարան, վարագույրի կտոր: Եվ այդ ամենը մայրիկին շտապ է պետք:

Ի՞նչ պետք է հարցնեք մայրիկից, որպեսզի գնումները ճիշտ կատարեք և ժամանակին:
Պարզելուց հետո գրեք, թե ինչից որքան է պետք գնել և երբ, մինչև որ ժամը:




6. Իսկ կարո՞ղ եք առանց չափող գործիքների կռահել, թե յուրաքանչյուր վանդակում որն է թեթև, որը՝ ծանր: Ո՞րն է ամենածանրը բոլոր նկարների մեջ: Կանաչ գունով ընդգծեք վանդակներում պատկերված ավելի ծանր առարկան, իսկ կարմիրով նշեք բոլոր պատկերների մեջ ամենածանրը:





Տնային հանձնարարություն

Ծանրութեթև արա և նկարի՛ր այնպիսի առարկաներ, որ նկարը ճիշտ ստացվի:



ԴԱՍ 8 – ՉԱՓԵՆՔ, ՉԱՓՉՓԵՆՔ

1.

Հնում, երբ մարդիկ դեռ չէին ստեղծել տարբեր չափիչ գործիքներ, չափումները կատարում էին իրենց մարմնի մասերով, օրինակ՝ ձեռքի չափով, ոտքի չափով, որովհետև այդ չափման գործիքը միշտ իրենց հետ էր: Այդ է պատճառը, որ մինչև հիմա դեռ տարբեր երկրներում օգտագործվում են մատնաչափ, թիզ, ֆուտ, յարդ չափման միավորները:

Թիզը՝ ձգած ափով բութից մինչև ճկույթ չափն է:

Ֆուտը՝ ոտքի թաթի երկարությունը, իսկ յարդը՝ կզակից մինչև մի կողմ ձգած, տարածած ձեռքի չափն է:

- Երբևէ տեսե՛լ եք, որ մայրիկները կամ տատիկներն այդպես գործվածքի երկարություն չափեն:



7. Բաժանվե՛ք խմբերի և կատարեք ձեր խմբին հանձնարարված չափումները: Պետք է կատարած չափումների արդյունքները գրի առնեք և հետո ներկայացնեք:



1-ին խումբ

Միմյանց օգնելով՝ չափեք բոլորիդ հասակը, ոտքի, ձեռքի, գլխի շրջագծի չափը և գրի առեք ձեր անվան դիմաց:

Որոշե՛ք, թե ինչ չափիչ գործիքներ են ձեզ պետք, և խնդրեք ուսուցչին տրամադրել դրանք:

2-րդ խումբ

Պետք է չափեք, թե մեկ դույլ ջուրը քանի բաժակ է և քանի շիշ:

Որոշե՛ք, թե ինչ չափիչ գործիքներ են ձեզ պետք, և խնդրեք ուսուցչին տրամադրել ձեզ:

3-րդ խումբ

Պետք է չափեք, թե որքան է ձեր կշիռը և որքան է ձեր պայուսակի կշիռը, ապա որոշեք, թե ինչ կշիռ ունեք դուք ձեր պայուսակի հետ միասին:

Համեմատեք:

Որոշե՛ք, թե ինչ չափիչ գործիքներ են ձեզ պետք, և խնդրեք ուսուցչին տրամադրել ձեզ:

4-րդ խումբ

Պետք է չափեք բոլորիդ ջերմաստիճանը, ինչպես նաև սենյակի և դրսի ջերմաստիճանը և համեմատեք:

Որոշե՛ք, թե ինչ չափիչ գործիքներ են ձեզ պետք, և խնդրեք ուսուցչին տրամադրել ձեզ:

5-րդ խումբ

Չափեք, թե քանի թիզ է ձեր սեղանի երկարությունը և լայնությունը, ինչպես նաև՝ թե քանի ֆուտ է ձեր դասասենյակի երկարությունն ու լայնությունը:

Որոշե՛ք, թե ինչ չափիչ գործիքներ են ձեզ պետք, և խնդրեք ուսուցչին տրամադրել ձեզ:

**Սակայն քանակը ցույց տվող բազում այլ բառեր ենք օգտագործում:
Օրինակ՝ մեկ դույլ կաթ, մեկ արկղ ծիրան, մի բուռ ցորեն, մի ճուր
խաղող, մեկ ողկույզ հաղարջ, մի պտղունց աղ, մեկ պճեղ սխտոր, մի
գլուխ սոխ և այլն:**



Տնային հանձնարարություն

Լրացրու՝ բառերը, որոնցով հաճախ քանակ ենք նշում:

Մի պ _ _ _ _ հաց

Մի դ _ _ _ _ նարինջ

Մի կ _ _ ջուր

Մի կ _ _ _ _ օձանելիք

Մի փ _ _ _ ծաղիկ

Մի շ _ _ _ _ ապուր